Google

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.

ՍՈՓԵՐՔ

ՀԱՑԿԱԿԱՆՔ

ԺԸ.

Digitized by Google

Digitized by Google

ԵՂԻՇԷԻ

ՔԱՀԱՆԱՑԻ

ՀԱՏ

ՅԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

ՌՃԳ — 1854

Digitized by Google

ՍՐԲԱՍԻՐԻ

ՅԵԱՌՆ ԵՂԻՀԷԻ

ՓԱՀԱՆԱՑԻ

ԵՒ

ՃԳՆԱՒՈՐ ԿՐՕՆԱՒՈՐԻ

ԵՒ ՄԻԱՑՆԱԿԵՑԻ

Ի ԹԱՐՕՐ ԼԵՐԻՆ

ՑԱՑՑՆՈՒԹԻՒՆ ՅԵԱՌՆ

ԱՌ ՊԵՏՐՈՍԵԱՆՑ

ԵՒ

Ի ՄԵԾ ԱՒՈՒՐ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Digitized by Google



Մունդեսն երթային նոքա 'ի Ճանապարհի, ասէ տէր մեր ցերկոսեսանան. Զո՞ ուստեք ասեն զինէն մարդիկս թէ իցեմ։ Պատասխանին նոքա զարտաքնոցն, զի այլ ընդ այլոց կարծէին։ Ասէ ցնոսա. Իսկ դուք զի՞նչ ասէք զինէն. յառաջեցաւ Պետրոս և ասէ. Դու ես Քրիստոս Ցիսուս Որդի Աստուծոյ։ Գովեաց տէր մեր զգեղեցիկ վկայութիւն նորա, և հօր իւրում ես զյայտնութիւն շնորհին. և զի գետ ես Պետրոս այսր և անդր դեգերէր, կարծէր եթէ Քրիստոս ոչ մեռանիցի, ոչ քաջ գիտացեալ, եթէ մարհուամբն նորա մահ մեռանի և աշխարհ կենդանանայ. ետես տէր մեր եթէ մոռացաւ Սիմոն զերանութիւնն երկնաւորս, արկ մորմոքումն բանից 'ի լսելիս նորա. զոլոր ինքն շարժեցաւ յահագին երկեւղէն. իբրեւ

Digitized by Google

լուսաւ 'ի տեսանէ, եթէ պարտ է
որդւոյ մարդոյ բազումս չարչարանս
ընդունել, մեռանել և յերիր ա-
ւուր յառնել. յոյժ որոմնցոյց ա-
նուամբ մահուն և առաւել քան
զյոյժ մխիթարեաց աւետեաւք յա-
րութեանն։ Իսկ նորա 'ի մեծ տա-
գնապէ՝ մահուն յիշատակօք մուա-
ցաւ զաւետիս յառնելոյն. որպէս և
է տեսանել 'ի բնութեանս մերում.
հին ախտքն բնութեանն մեզացն՝ ոչ
տայ թոյլ վաղվաղակի եկամուտ նո-
րոյ կենացս 'ի ներքս անկանել. որ-
պէս և որդիք ժողովրդեանն հին
կուրութեամբն խանտային ընդ նո-
րոյ կենացս երեւումն, անուանե-
լով զնա Եզիա կամ Երեմիա կամ
զայլ ոք յառաջին մարգարէից,
չար 'ի մխիթարութիւն անէանց
իւրեանց մահկանացուացս։ Մահ-
կանացու կարծէք՝ զմիտս ժողովուր-
դեանն յերկուսացուցանելով յայն-
մանէ, որ եկն կատարել զբանս
մարգարէից. նովին ախտիւ խոհեա-
նայր և Պետրոս. զվկայութիւնն գե-
զեցիկ մատոյց, զնորհուրդն չա-

րաչար հիւանդացոյց. իբրեւ յան-
զգայ սաստկագոյնս ընդդէմ չոգաւ.
Քա՜ւ քեզ, մի՛ լիցի այդ բան, ասէ։
Զբոլոր հին կարծիս մտացն ած
թափեաց, զառաջին գերլեցիկ վկայ-
ութիւնն եւլոյծ. Հայր յայտնեաց
նմա զբոլոր աստուածութիւնն
Որդւոյ, զի աստուածութեամբ և
մարդկութեամբ զչարչարանսն ըն-
դունիցի՛, և որ չարչարիցի՝ նոյն և
յառնիցէ։ Ցայսմ աւեստիս խնդալ
էր ամենեցուն և ոչ ըղձիւք սրդե-
լու զնա յերկոցունց։ Տեսեր, ուր
զաստուծոյն խօսեցաւ՝ երանի եռ
նմա. իսկ ուր ըստ հին մարդոյն խոր-
հեցաւ՝ ասաց նմա յայտնապէս,
Ցետս երթ սատանայ, զի ոչ խոր-
հիս զԱստուծոյն, այլ զմարդկանս։

Մարդոյ խորհուրդք իբրեւ ըզ-
ծուխ անպիտան են. 'ի ծուխ անդր
սաստեաց և հեռակորոյս արար զնա
'ի նոր մարդոյս, զի լցէ ինքնածագ-
ղոյս առանց ապականացու խորհրդ-
դոյ. որ և արքունիքն իսկ անուա-
նելոց էին՝ յորս սաստեաց, և առ-
ընկէց զնա յերոյ իւր, զի ինքն ըզ-

Digitized by Google

կամն Հօր իւրոյ կատարիցէ առանց գայթակղութեան իրիք գնելոյ։ Ուստից և նոցա չարչարանս ընդունել յիւրաքանչիւր անձինս, և անդէն առ նմին յուսով յարութեամբ հաստատեաց զնոսա. ոչ միայն որ յապայն լինիցի, այլ զի և առժամայն փոքր 'ի շատէ ցուցցէ զնմանութիւն երկրորդ գալստեանն իւրոյ, որպէս և ասէ իսկ անգուտ վըկայութեամբ. Արդարեւ ասեմ ձեզ, իցեն ոմանք որ այժմ աստ կայցեն, մի ճաշակեսցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւնն Աստուծոյ. զի եկեալ հասեալ իցէ զօրութեամբ իւրով։

Եւ յայսմ տեղւոջ երեւի ոմանց սակաւիկ մի ընդդէմ միմեանց բանք աւետարանագրացն. Մատթէոս յետ վեց աւուր ասէ. իսկ Ղուկաս և Մարկոս յետ ութ աւուր ասեն. այլ մեք բաւական համարիմք զոմանց առացեալսն. Մատթէոս, ասեն, զաստի անտիսն եւթոզ և միայն զմիջոցն առ 'ի համար. իսկ երկուքն և զխոստանալն և զերրեւելն հան-

Digitized by Google

գերձ միջաւն. և հաճոյ թուեցաւ ամենեցուն ընդունել զայս. և մեք 'ի նոցուն հաւանիմք միաբանեալ, որպէս ցուցանէ մեզ Մարկոս աւետարանագիր. Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ իբրեւ անցին աւուրք ութ, առեալ տէր մեր ընդ իւր զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և եկ 'ի լեառն մի բարձր առանձինն. և յայլակերպս եղեւ առաջի նոցա, և ձորձք իւր եղեն փայլուն և սպիտակ յոյժ, որպէս զի ոչ կարէին թափիչք երկրի այնպիսի ինչ սպիտակացուցանել. և երեւեցան նոցա Մովսէս և Եղիա զի կային և խօսէին ընդ Յիսուսի և պատմէին զելս նորա զոր կամէր կատարել յԵրուսաղէմ։ Յայս վայր սուրբ աւետարանագիրս երկրորդեաց զյայտնութիւնն երկնաւոր։ Յամենայն բանս աստուածային գրոց՝ յոյժ է զարմանալի հոգեղէն բնութեանս. իսկ յայնպիսուամ յերկնաւոր երեւմանն՝ ոչ միայն մեք տկարանամք, այլ և անմարմին զօրութիւնք երկնից։ Զբոլոր ժամանակն զոր շրջեցաւ տէր մեր յաշ-

խորհի՝ առաւել զանցուցանէ ըստ մարդկան խոնարհութեանս. իսկ 'ի Լերինս յայսմիկ՝ և ըստ հրեշտակացն անցոյց ահաւորութիւնն. ոչ միայն զի ինքն լուսեղէն փառաւքն երևեցաւ, այլ զի և զմահուն եբեկ գրոնաս, և զառաքելոցն կատարեաց զխոստմունս. Աստուծոյ, ասէ, այսպէս լաւ խորհել, զի առանց մերոյ մի ինչ կատարեսցի։ Եւ Դաւիթ յաղաղակելն իւրում ասէ. Ինձ սպասեն արդարք մինչեւ հատուսցես։ Եւ երկրորդ մեծ ձայնիւքն 'ի մեծամեծաց մինչեւ ցգոգրկումն՝ կատարածին ոչ ուրուք ընկալեալ լինի զհատուցմունսն իւրաքանչիւր. որպէս 'ի միում շաբաթու հաստատեաց զամենայն արարածս, 'ի միում աւուր շաբաթանան երկինք և երկիր, և ամենայն մարդ ընդունի ըստ վաստակոց իւրոց։ Արդ էած ընդ իւր զՄովսէս և զԵղիա 'ի վկայութիւն. զի Մովսէսիւ զյարութիւն մեռելոցն ուսուցանէ նոցա. և Եզիայիւ ցուցցէ զսիրելի մահ աստուածութեանն իւրոյ նոցա, ո-

ղում Եղիան յոյժ էր տեղեկագոյն, և ցանկայր թէ երբ լինիցի տեսանել. և տեղին Ճշմարիտ էր արքայութիւն. քանզի լիով էր անդ միասնական Երրորդութիւնն։ Եւ վասն զի ոչ է Աստուած 'ի տեղւոջ. երբեւեցաւ մարմնականացն իբրեւ զտեղաւոր. և 'ի տեղւոջն ուր Աստուածն գումարեցաւ՝ առանց պատկառելոյ անուանի արքայութիւն. քանզի այն իսկ է արքայութիւն ուր աստուածութիւնն երեւի։

Եւ դու, ո՛վ տէր իմ Պետրոս, ընդէ՞ր զահի հարեալ ես 'ի մահուանէդ, ուստի բոլոր բարիքն զերազանին աշխարհի. զոր և այժմ իսկ յայլոց զդոյն լուիցես. զի այսէ առեառարանադիրն եթէ Մովսէս և Եղիա զելս նորա պատմէին զոր կատարելոցն էր յԵրուսաղէմ։ Արդ իբրեւ հատես Պետրոս, եթէ մեռեալք և կենդանիք զնոյն բանս քարոզեն, և ինքն կամաքս տէր յայն եկեալ է հօր միաբանութեամբ, եւս քաջ վասանդեցաւ յառաջին

երկեւոյն. քանզի հաստատեալ էր
ասաց եթէ 'ի մահուանէ տէր մեր ոչ
է զանգիտելոց. և մեզ թողուլ և
փախչել զաս անհնար է. նաեւ զայն
եւս քաջագոյն ածէր զմտաւ, եթէ
յորժամ իջանէ սա 'ի լեռնէ ասասի,
պարզ յՅերուսաղէմ երթայ, ուր
մեզ կասկած իսկ է մահու. վասն
այսր խզձի մտաց իւրոց, սկսաւ ա-
սել ցտէր, զի հրամայեսցէ առնել
տաղաւարս իւրաքանչիւր նոցա, և
զՄովսէս և զԵղիա մի արձակեսցէ
անդրէն. որպէս թէ ասիցէ ոք 'ի
կարծիս մտաց իւրոց, թէ ինք
յայսմ լերին իշխանութիւն մահու,
և եթէ 'ի լեառնս յայս մահ երկնչ-
ի եւլանել. հրէայքն իսկ ոչ կարեն
յանդգնել 'ի սա. տպա եթէ և մեք
իսկ երթիցուք յՅերուսաղէմ, յոր-
ժամ և Մովսէս և Եղիա ընդ մեզ
իցեն, ոչ կարեն քահանայքն խուռել
զմեզ. քանզի յոյժ տեղեկագոյն են
սատանիկ ահին տոցա։ Այն Մովսէս
է այս որ յանապատին բիւրս բա-
զմամս կոտորեաց 'ի նոցանէ, և բա-
նիւ հրամանաւ տորա բացաւ երկիր

և եկուլ զբանակս նոցա։ Զեն ան-
տեղեակ և վասն Եղիայի, թէ սա-
կաւիկ ինչ խոժոռին ընդդէմ սո-
ցա, կապէ զերկինս և արգելու
զանձրեւ 'ի սոցանէ. և եթէ եւս
յանդգնեսցին՝ իջուցանէ հուր յեր-
կնից և այրէ զթշնամին Աշմարտու-
թեանն. 'ի բազում տեղիս գիտեն
զզօրութիւն ահի սորա, ոչ միայն
անուանեալ քահանայքն, այլ և
արտաքին ուրացողքն նոցա. չէ մո-
ռացեալ նոցա զսատակումն զուրթ-
հարիւր քրմաց նոցա զոր ինքն իւ-
րովք ձեռօքն կոտորեաց 'ի հեղե-
զան Կիշոնի. և եթէ Ա.քայաբ
թագաւոր երկնչէր 'ի սմանէ, ոչ-
չափ եւս Աննա և Կայիափա՝ որ
տկարագոյնք են քան զԱ.քայաբ։

Վասն այսր ամենայն կարծեաց
նոցա որ մարդկաբար երկնչէին,
յոյժ ողորմեալ նոցա Հօր 'ի վերուստ
ասէ. Դա է որդի իմ սիրելի, դմա
լուարուք։ Ծառայք երկրաւորք
պահապանք լինէին տեառն իւ-
րեանց. զի երկոքեան անկեալք են
ընդ ախտիւք երկեւզի. երկնից ասէ-

Digitized by Google

րութիւնն ոչ ինքն յուսմբէ պատհեալ
լինի. այլ նա պատհէ զամենեսեանն
իւրով զօրութեամբն։ Եւ տապա-
ւարս հարկանել գուք մի՛ աշխա-
տիք. եթէ կարի ջերմարուք, ահա
տուեալ է ձեզ ամպ հովանի, ընդ-
ամպովք հովանեաւ զովացարուք։
Այս բարբառս իբրեւ եկն նոցա
յերկնից, հայեցան տեսին զՅիսուս
միայն. և տապս կարացին խմանալ,
եթէ յահէ անտի թմբրեալ էին նո-
քա, և ոչ գիտէին զինչ խօսէին։
Եւ եթէ թմբրեալս կոչէ զնոսա
գիրն, զիարդ ծանեան զՄովսէս և
զԵղիա. յայտ է թէ յիմարելոց
էին թմբրեալք, այլ ոչ՝ է լսելոյ և
յիմանալոյ. զոր աչօքն տեսին ՀԸՇ-
մարիտ էր, և զոր ականջօքն լուան՝
էր ստուտ. այլ քանզի կարի տհա-
գին էր ժամն, ոչ կարացեալ մարդ-
կային բնութիւնն հասու լինել
երկնաւորս բնութեանն. վասն զի
այսր և անդր սայթաքէին և մեզա-
դրեալ ոչ ոք կարէր։ Զի եթէ մեծն
Աբրահամ զվերին զօրութիւնն
բոլորովին մարդացեալս եռեռս, բաս-

խելով 'ի յոգիան՝ ոչ կարէր կալ 'ի վերայ ճշմարտիւ, այսր և անդր տարաբերէր զմիտան. տեսանէր երիս և մի կարծէր, կարծէր մի և իսանէր ընդ երիս. երեւէին մարդ, նա իմանայր Աստուած. և ամ իսկ 'ի հոգեղէն բնութեանս կարասցէ ճշմարտիւ կալ և իմանալ զայն զանբաւ մեծութիւն. ոչ միայն մարդիկ մարմնաւոր, այլ և ոչ պարզ բնութիւնքն երկնից։ Ցիրաւի կոչէ գիրն թմբրեալս զնոսա. յորմէ զօրութենէ լերինք հալին և անգունդք ցամաքին, և ամենայն թանձրահոգ երկիրս 'ի հիմանէ դղրդեալ սասանի. ողորմութեամբ իւրով խնայէ 'ի մեզ, զի գործք ձեռաց նորա եմք. որպէս հանապազ յամենեսեան և այն օր երկեան 'ի լերինն։

Գիտեմք զի աստուածային գիրքս այլ ընդ այլոց ջիւսին, այլ զամենայն պատմեն ճշմարտիւ. բայց է բան, որպէս ասի՝ նոյնպէս և իմանի. այլ պիտոյ է ծածկեալ մտաց բանին յայտնութիւն, որ հաւատովք ընդունին 'ի փրկութիւն ան-

ձանց։ Ծանեան, ասեն, Պետրոսեանք զՄովսէս և զԵղիա. իբրեւ ասես, եթէ այր ծանեան, զիարդ ասեն ծանեան՝ զոր ոչն գիտէին. քաջ 'ի միտ առ զզօրութիւն բանին, և մի մոռացկոտ լինիր իբրեւ զտէր Պետրոս. 'ի գլուխ Ճառիդ ընթերցիր, արքայութեն ասացս տեղւոյն. չէք անդ մոռացումն մարդկային, այլ յիշողութիւն անմոռացման. քանզի մեզ նմանութեամբ էր տեղին արքայութիւն, իսկ առ աստուածութիւնն ամենայնիւ բովանդակ։ Ուստոյց մեզ տէր ոչ զբնական դպրութիւնս, այլ զիմացական դիտութիւնն. իբրեւ թէ փոխեցան արքն յերկրէ յերկինս, զաստի իմացմունս թմբրութիւն կոչեցին. զանտեսն Ճանաչելով արքայութեան մանկունս անուանեաց, և մարգարէութեան մանկունս. ուստոյց նոցա գիտութեամբ, զի ոչ եւս կարօտանայցեմք յերկնաւոր ժառանգութեանն, անծանօթս լինել առաջնոց, միջնոց և վերջնոց։ Յորժամ արքայութեան որդիք լինիցին արքայ-

ժանաւոր մարդիկ՝ ծանօթութիւն յաստուածատուր շնորհէ անսի բաշխի. զոր այժմ մտօք իմանամք՝ ընդ հայելի օրինակ անուանեցաւ. իսկ յորժամ մարմնական քոզ 'ի մէնջ բարձցի, դէմ յանդիման տեսանեմք զաստուածութիւնն որպէս և մարթի. զհրեշտակաց բնութիւն բովանդակ, զանծանօթն իբրեւ զանձինս մեր, արտաքնովքս՝ իբրեւ զարտաքին դէմս, մտօք՝ զարտաքին և զներքին։ Եւ զի դեռ եւս պետրոսեանք մարմնաւորք էին, կաթեաց 'ի նոսա նշոյլ իմանալի շնորհին 'ի յոգին. բաւանդակ ծանեան զՄովսէս և զԵղիա. իսկ արտաքին զգայութեամբք էր 'ի տեղւոջ անդ՝ որ այլ ընդ այլոյ խօսեցան. և այլոյ մասամբ դարձեալ ողորմեցաւ նոցա Աստուած. այն է՝ զի հաւաստեաւ ծանեան զՄովսէս և զԵղիա, և զի մի ինչ գէզ մնասցէ 'ի միտս նոցա, 'ի բանից անտի նոցա եւս քաջ հաստատեցին զծանօթութիւնն։ Ընդքա յայտնի խօսէին ընդ տեառն, և ողբա զամէն

լիով լսէին 'ի նոցանէ, և զոր լուանն՝ այլ ոչ իմացան. զի եթէ մոռացեալ էին՝ և դրէին ոչ աւետարանագիրքն։

Բայց խնդիր այս կայ առաջի. Զի՞նչ արդեօք Մովսէս խօսէր ընդ տեառն, և կամ զի՞նչ Եղիա երկրորդէր առաջի նորա։ Աւետարանիչն պատմէ եթէ զելս նորա ասէին զոր կատարելոց էր յԵրուսաղէմ. ելք նորա մահ նորա է, և 'ի մահուանէ իսկ նորա եղեն ամենայն բարութիւնքն երկնաւորք։ Եւ ո՞ւր արդեաք գրեաց Մովսէս վասն մահու Որդւոյն Աստուծոյ։ Մի՛ այդպէս հարցաներ ցիս թէ ո՞ւր արդեաք գրեաց. ամենայն մարդարէք և օրէնք վասն մարդանալոյ Բանին Աստուծոյ պատմեցին մեզ. չարչարելոյ և մեռանելոյ և յառնելոյ. 'ի ծնունդն. Մարգարէ յարուցէ ձեզ Աստուած յեղբարց ձերոց, յօրէնագրութիւն նորոց կատակարանաց. մի իբրեւ զիսն ասելով նմա լուիջիք, զիւր օրէնսն լուեցոյց, զաւետարանն յառաջ հրամայեաց մա-

տուցանել, 'ի մկրտութիւնն, 'ի ծովն, յամպն, 'ի սիւն հրոյն, 'ի խոցումն կողին, 'ի վտակաբուխ վէմն։ Եթէ յինէն ոչ ընդունիս, յառաքելոց հարկաւ որ ընդունիս. Վէմն, ասէ, որ երթայր զհետ ժողովրդեանն նա ինքն էր Քրիստոս. 'ի փայտ խաչին, 'ի գաւազանն նը-շանագործ, 'ի մահ անարատին, հեղումն արեան գառանցն յԵգիպտոց, 'ի զօրութիւն մահուն՝ փրկութեամբ նոցին 'ի ծառայութենէ, զաւետիս յարութեանն, զայն սուրբ ոսկերքն Յովսեփու պատմէին նոցա. մեռեալքն զկենդանիս ապրեցուցին 'ի մահուանէ. զվերանալն նորա՝ մեծն Դաւիթ գրեաց նոցա և ամենեցուն. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ և տէր մեր ձայնիւ փողով։ Զայս ամենայն և Եղիա գիտէր, քանզի մի հոգի էր որ խօսէր յամենեսեան, մի օրինակ գիտէին ամենեքեան. էր ոք որ սակաւ բանիւք զայս ասէր, և էր որ բազմագոյն առնէր զյանգիմանութիւնն, սակայն զօրութեամբ զսոյն երկրորդ-

Digitized by Google

գեն։ Զայս ամենայն խօսէին ընդ տեառն Մովսէս և Եղիա, զի առաքեալքն վկայ լինիցին անտուա բանից նոցա, եթէ վաղու հասեալ էր գաւառավճիռն մահու 'ի վերայ նոցա, և մի ոք իշխեսցէ լինել ընդդէմ բանից նորա. և որպէս երեւեցաւ յայտնի յայնմ հետէ այլ ոչ ոք իշխեաց երկրորդել զնոյն բանս առաջի տեառն։

Բայց գոնա խրատս լուիցես զկաչն Մովսէսեանց և խօսել ընդ նմա, մի վարկպարարազի անփոյթ առնիցես և մի սակաւ բանս իմանայցես. և մի ընդ վայր շատխօսութիւն համարեսցիս. քաջ զմտաւ ած և տես զգաստութեան արան. եթէ միտ դնես, զբոլոր երկրային արքունեաքս զանց առնէ տեղին. և կամ ոչիր տուաջի կանն. և կամ որք կանն՝ եթէ ոչ զերկնից մեծութիւնն ունէին, ոչ կարէին առաջի տեառն երկնից կալ և խօսել ընդ նմա. այլ սիրով իւրով ած զնոսա և ողորմութեամբ իւրով մերձեցոյց առ ինքն, և ներելով իւրով արար նոցա զուն-

կընդդրուԹիւնն. վասն որոյ կարաց-
ին լինել յերկարաբանք։ Թուի
ինձ Թէ յոյժ ողբային զազգա-
տոհմն, զի գուԹ ունէին 'ի վերայ
գաւառացն՝ վասն քաղցր արմա-
տոյն. ԼԹէպէտ և լեալ էր 'ի նոցանէ
յառաջ արդարք բազումք, յայնմ
ժամանակի չար տեսանէին զամենե-
սեան։ Ճշմարտեցին եԹէ եկն ե-
հաս ժամանակ, և մերձեցաւ օրն
յորում շինչանելոց էր նոցա ճրագն
առկայծեալ, և եղէգն չախչախեալ
արմատաքի խլելոց էր. 'ի ծածուկ
ողբային զազգն 'ի միտս իւրեանց,
տեսին եԹէ ամենայն ինչ նոցա 'ի
հեԹանոսս փոխելոց է, և նոքա
մնան՝ լոկ իբրեւ մարմին առանց
ընչոյ։ Տեսին և զբարեբարուԹիւնն
Աստուծոյ, որ ոչ կամի ընդ կո-
րուստ և ոչ ընդ մի մարդոյ, հա-
մարձակեցան հարցանել ցտէր՝ որ
գիտէր զծածուկս սրտից նոցա, ե-
ԹԷ գուցէ ինչ հնարս, ասեն, այլով
օրինակաւ քեզ չմեռանել, և աղ-
գին չկորնչել, և հեԹանոսաց լինել
փրկուԹիւն։ Իսկ տէր մեր ոչ տրտ-

Digitized by Google

մեցոյց զսիրելի ծառայն իւր, այլ զհարցումն ապատասխանւոյն 'ի կամս հօր իւր արար։

Գուցէ ասիցէք ցիս, Ուստի՞ իշխեցեր զանգիրսդ երկրորդել։ Ես իսկ ասեմ զտէր՝ զի լայր զԵրուսաղէմ և յոյժ լայր զազգն ընտրեալ։ Նոյնպէս մեծ էր, զի այսօր 'ի վերայ երեսաց իւրոց յաղօթս անկաւ առ Աստուած. ոչ մարդ էր դուշնաքեայ, այլ բոլոր զօրութեամբ իւրով, յերկար տաժանութեամբ զողջոյն գիշերն, մինչեւ քրտունք ատատիկք հոսեցան 'ի նմանէ։ Եւ 'ի կատարել աղօթիցն, զՄովսէսեանց հարցուածն երկրորդէր. Հայր, ասէ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. և անդէն վաղվաղակի զինդիր իրացն 'ի կամս հօր իւրոյ ապաստան առնէր։ Եւ դարձեալ եկաց յաղօթս, և զնոյն բանս երկրորդեաց։ Եւ մեզ այս կարեւոր է ուսանել քան զամենայն. որպէս նա ըստ կամս հօրն ոչ կամեցաւ ելանել, և մի գուր ըստ նորա կամանն ելանիցես։ Վասն որոյ և Եղիայ-

եանք ոչ կարացին մեղադիր լինել տեառն. նոյնպէս և Պետրոսեանք որք ականատեսք եղեն, ոչ միայն մեղադրեալք, այլ և նոքա շնորհակալու ընդ ամենայն ախեզերս: Այս է յերկարաբանութիւն արանցն առաէր, ոչ միայն շատ խօսելով ընդ նմա, այլ ամենեւին չգնալ 'ի նմանէ, նա և եթէ հնար ինչ գուցէ՝ մեռանել ընդ նմա. և եթէ Մովսէս ոչ մարթէր կրկին մեռանել, վասն Եղիայի՝ եթէ աէր կամէր՝ գոյր հնար: Յորժամ առաջին հարցուած նոցա 'ի գլուխ ոչ չոգաւ, վասն երկրորդին յոյժ էին ցանկացեալք: Ո՞ ոք 'ի սիրելի զօրականացն մնասցէ 'ի պատերազմէ, յորժամ թագաւորն ինքնին 'ի վերայ թշնամւոյն ելանիցէ. և եթէ երկրայինքն զայս առնեն, որք յերկբայս են յաղթիլ քան թէ յաղթել, քանիօ՞ն յօժարութեամբ երկնաւորին լինել նահատակից. զի ոչ մահուկասկած առաջի կայ, այլ անմահ կենաց յաղթութիւն: Յայսմ պատերազմէ ոչ ումեք օրէն է զանգի-

ասել, ոչ արանց և ոչ կանանց, ոչ արգարոց և ոչ մեղաւորաց, թէ հնարք է՝ գուցէ և երկնաւորացն։ Բայց սա աւասիկ թէպէտ և Եղիայի կարի անձկալի՝ լինել նմա խաչակից, բայց արգել զնա տէր, զի մի ոք յարդարոց խաչեսցի ընդ նմա. քանզի ոչ իսկ էր եկեալ եթէ վասն արդարոց խաչեսցի, այլ վասն բարւոյ՝ որպէս և համարձակեցաւն իսկ մեռանել, զի իւրով մահուամբն զամենեցուն մահ խափանեսցէ։ Արդեալ զԵղիա 'ի մահուանէ, զի մի զառաջեալ պատիւն հանցէ 'ի նմանէ. և ոչ միայն զԵղիա արգելու լինել իւր մահակից, այլև ոչ զմի ոք յարդարոց՝ ոչ կամի եթէ ոք մեռցի ընդ նմա, այլ 'ի մեղաւորաց, ոչ իւրով բանիւ, այլ զոր քահանայապետքն կամեսցին. յայնժամ թերեւս և անդ երեւեսցի նորա բարերարութիւնն, զոր և յառաջագոյն իսկ ասացեալ է, եթէ վասն մեր ընդ անօրէնս համարեցաւ։ Աւ տէր իւր խնայեաց յԵղիայ. զի կեցցէ յանմահութեան պարգեւին, և լիցի քարոզ երկրորդ գալստեան նորա։

Գիտէ Աստուած զինչ գործէ, և զբարին ինքն առանձինն կատարէ. շատ լոյէ քեզ եթէ 'ի նորա յոյսն գիտիցես վայելել, և յորժամ նա դուռն բացցէ քեզ. ապա եթէ կամիս՝ և դու կարես գործել իբրեւ զնա, որպէս եղեւ առաքելովքն և լինի Քրիստոսիւ մինչեւ ցայսօր։ Գիտեմ զի բազումք ցասուցեալ են ինձ. Տէր մեր, ասեն, զարքայութիւնն եցոյց 'ի լերին անդ, և դու եկեալ զմահու ճառս պատմես մեզ։ Միտ դիր ճառիդ, և անտի հաւանիս. եւ անել իսկ նոցա 'ի լեառնն՝ մահու պատճառք եղեն սկիզբն. և եկեալ Մովսէսեանց զնոյն երկրորդեցին առաջի տեառն, և մեք 'ի նոյն ճառ տեսաք զարքայութիւնն։ Յոյժ սպիտակ էր պայծառութիւն ձորձոյն և անցանէր ըստ արեգակնային ճառագայթս այն. ըստ արժանաւոր տեղւոյն և հանդերձիցն վայելչութիւն պիտոյ էր. այլ կատարեալ այնիւ էր արքայութիւնն՝ ուր Հայր և Որդի մարդկան յայտնին. զայն և անփոփոխ իսկ է իմա-

նալ, անանց կալ մնալ յաւիտենա-
կան։ Բայց 'ի սպիտակութիւն ձոր-
ձոյն սակաւիկ մի ակնարկեցից՝ 'ի
մահ անմահին։ Ամենայն արարածք
յանմխիթար սուգ նստէին. վասն
զի անմահին Աստուծոյ անմահ
պատկեր՝ մարդս է. ընդ մահուամբ
անկեալ դնէր՝ յանլոյծ խաւարի, և
ոգածէին առ հասարակ արդարք և
մեղաւորք, և ծանրալից հանգերձ
սգոյ ունէին, որ է նմանութիւն
խաւարի. և ոչ ոք կարէր յեղելոցս
ղծանրութիւն սգոյն բառնալ յաշ-
խարհէ, բայց միայն այնիւ էր հնար՝
որով եղեւն ամենայն։ Արդ զար-
գարեցաւ 'ի մահն իւր, ոչ երկրային
պատուական հանգերձիւք, այլ
բնական ինքնածագ լուսոյն իւրով,
զի հալածեացէ յաշխարհէ զվշտա-
նութիւն խաւարի, և զթախծալից
տրամութիւն մարդկան միխիթարեա-
ցէ. և զներկուած հին տրամու-
թեանն՝ իւրով անապական լուսոյն
սպիտակացուցցէ։ Եւ մարդիկ որ 'ի
վերայ մահուան սիրելեաց իւրեանց
տխրին և մթանան, և գրեթէ կեան-

դանոյն զմահ Ճաշակեն, հայեսցին նոքա 'ի զուարթութիւն պայծառութեան մահու Որդւոյն Աստուծոյ, և բարձցի 'ի նոցանէ սուգն անյոյս տրտմութեան, և լցցին յուսով յարութեամբն, և մի եւս այլ երկիցեն 'ի մահուանէ, որ դողացոյց զարդարս և զմեղաւորս։ Վասն այսորիկ խօսիմք 'ի տեղւոջ սատ ըզՃառս մահու, զի տեսանեմք 'ի սմա զարքայութիւն երկնից, որ եկեալ հասեալ է զօրութեամբ իւրով մեծաւ համարձակութեամբ։ Ոտն հարկանեմք 'ի վերայ մահու. վասն զի յուսով 'ի վերայ արքայութեան տեսաք զանձինս. հաՃեալ եմք ընդ տեղի լերինս, ուր կրկին յայտնութիւնն եղեւ առ մեզ, մանաւանդ թէ երեքկին. մեռեալ գիտէաք զՄովսէս և կենդանի տեսաք. նա եբեր զաւետիս յարութեան ամենայն մարմնոյ։ Կիսահաւատ ազգն Հրէից զՀոգին Եղիայի յափշտակեալ խոստովանէին, և զմարմինն իբրեւ զանպիտան ինչ գոյացութիւն 'ի վայր ընկեցեալ. եկն երթեւեցաւ

բովանդակ հոգւով և մարմնով, լի բարձցէ զխիզձ 'ի մտաց նոցա, եթէ կամեսցին ընդունել։ Կարծէաք եթէ ոչ անցանէ թագաւորութիւն մահու. տեսաք անդ 'ի լերին զմահ մեռեալ և զկեանս թագաւորեալ։

Եթէ գուք կամիք՝ անդէն 'ի ձառս լերինն գարձցուք, քանզի և իջեալ իսկ չեմք 'ի լեռնէ անտի. և մինչ անդն եմք՝ զանտիսն եւեթ խօսեսցուք. և զինչ անդ բանքն են՝ համակ ղնովիմբ եկեսցուք. և եթէ առ 'ի պէտս այլոց բանից իջցուք 'ի լեռնէ անտի, դարձեալ 'ի նոյն լեառն ելցուք. եթէ երկիցս և եթէ երիցս, սակայն զնոյն արասցուք մինչեւ կատարեսցի ձառս. շուրջ զլերամբն վիակեսցուք։ Բայց առ այժմ 'ի վերայ անդ զտէր Պետրոս հարցանել պարտէ, եթէ Ա՞ռ ի՞նչ սիրեցեր այդչափ զլեառնդ և այդր կամիս առնել քեզ բնակութիւն, քեզ և ընկերացդ. եթէ առնիցես՝ սակաւիկ մի պատեհագոյն է քեզ և տեսառն և Մովսէսի։ Եւ այդ ինձ կարի պատեհագոյն թուի. Ցարեաւ, ասէ, 'ի մե-

ռելոց, վասն այսր կամիմ թէ ասա կայցեն։ Ցարուցեալ՝ որ տաղաւարի կարօտանայ. այնմ եւս յարութեան իսկ չէ արժան ասել, այլ երազ և առ աչօք երեւումն։ Ուրեմն չեւ եւս տեղեկացեալ վասն յարուցելոյն, սակաւ մի ճաշակ եցոյց քեզ յարութիւնն, ընդ տեսանելն և թմբրեցար. եթէ այնպէս 1 փառօք էին նոքա քեզ՝ որ անփոփոխ ընդունելոցն են, դու ապաքէն եւս առաւել վանգէիր։ Բայց ոչ կարեմ մեղադիր լինել քեզ, զի դեռ եւս հրէախառն ես. ընթեռնուս զգրեալսդ օրինացն, այլ իմանալ չեւ եւս կարացեալ զարժանն։

Ի լերինն շքեղացան դէմքն Մովսէսի, և հաղքն ձեր ոչ կարացին հայել յերեսս նորա մերկ, և դու զոգիսդ ընդ մարմնական վարագուրովդ ծածկեալ ունիս։ Մովսէս ծածկելով զդէմն՝ մերձեցոյց զնոսա առ ինքն, և տէր զայն քող մերկանայ 'ի սրտից ձերոց. անդստին իսկ ունի զմարդասիրութիւն առ ազգդ ձեր. ասատուածանուն մեծա-

րեաց զծառայս իւր և փառաւք իւրովք զարդարեաց զնա, և ժողովուրդն առ առեալուն թեան իւրեանց փախչէին 'ի նմանէ. և նա նշանաւք և արուեստիւք արծարծէր զնոսա, զի ընդելեալ մարդասիրութեամբ նորա մերկ դիմաւք կարասցեն տեսանել զաստուածութիւնն 2։ Սոյն սա նա է, որ բազում իրաւք կրթեաց զձեզ, զի այսօր արժանի լինիցիք տեսանել զՀաճանչ լուսոյ աստուածութեն. բայց այսօր դու լաւագոյն ցուցար քան զնոսա. թէպէտ և զարհուրեցար, այլ ոչ 'ի փախուստ դարձար. այդպէս երեւեցաւ, եթէ սէր Աստուծոյ մեծապէս բնակեալ է 'ի քեզ՝ քան յառաջին ժողովուրդն։

Այլ և արդ շուրջ զքեզ հայեաց քաջ. ընդ ո՞ւմ շրջիս, առ ո՞ւմ նստիս, ո՞յր ես ուղեկից, և կամ ո՞յր խորհրդակից։ Ո՞չ դու եռուր զգեղեցիկ վկայութիւնն և դու խոստովանեցար զՔրիստոս որդի Աստուծոյ. ո՞վ քաջ. Աստուած խոստովանիս և 'ի տաղաւարս բնակեցուցանես. զայդ ոչ միայն Քրիս-

տոս չառնու քեզ յանձն, այլ և ոչ ընկերակից քո Եղիա. զվերանալն նորա տեսեր դու, և պատիւ մեծութեանն երեւեցաւ քեզ. եթէ զայն ճշմարիտ գիտացեր, զայս ոչ արժանապէս խօսիս։ Յի՞նչ նիւթոց կազմեացեալ զխուղաղ, ասա ինձ. ապաքէն 'ի փայտէ և 'ի խոտոյ. ո՞վ մեծ յերկոտասանդ, քաջայուշ լեր. կառս ունի հրեղէնս, երիվարս բոցեղէնս, հուր և խոտ 'ի միասին ոչ բնակեն. բայց եթէ զայն եւս արտաքոյ թողուցու, ինքն 'ի նոյն պատիւ է զարդարեալ. և եթէ ոչ այնպէս էր, զիա՞րդ հանդարտէր կայր բոցոյն առաջի։ Քեզ այսօր սակաւիկ մի սպիտակութիւն երեւեցաւ, և դեռ ատանդեսս բանիւք. ուր Եղիայն բնակեալ է, եւս առաւել պայծառագոյն է, քան որ քեզդ երեւեցաւ. և դու զայդպիսի այր 'ի տաղաւարս հրաւիրես, և ո՞չ պատկառիս 'ի շքեղ պատուոյ նորա։ Դարձեալ և զտէրդ աշխարհաց 'ի կարօտութիւն ածցես և 'ի տեղւոջ կարծես։ զդա գիտես տե-

զի ամենեցուն և զամենեցուն կարօ-
ղութիւն բառնալ։ Ոչ 'ի տեղւոջէ
այսոքի երեւեցաւ գա պատուական,
այլ տեզին գովաւ շքեղացաւ։ Սա-
կաւիկ մի ապիտակ ձորձով զարհու-
րեցար, յորժամ բուռն հայրենի
փառաքն տեսցես, յայնժամ և ոչ
զմի տեզի յերկրաւորս պատուակա-
նաց ասոքի դմա համարեսցիս արդ-
ժանի. այլ բարբառն որ եկն 'ի վե-
րուստ՝ զայն գիտես դմա տեղի և
փառս և վայելչութիւն անպատում.
և դու յայն հայեաց, զհետ այնր
ձայնի լեր կաթոգին։ Այժմ աչք
մարմնոյդ լցան լուսով, ապա բոլո-
րովին իսկ դու լուսալի լինիս. զի և
դու իսկ քեզ հազիւ կարիցես հա-
սու լինել։ Այլ տէրդ արքայու-
թեան՝ չէ կարօտ տաղաւարաց.
ամենայնիւ արժան էր քեզ ուսանել,
որ ես հար ժողովրդեանն տաղաւարս
յանապատի անբաւ բազմութեանն.
ամենն էր բաւական հովանի, և ըզ-
բոլոր գիշերն լոյս հրոյ առաջնորդ-
դէր. և եթէ 'ի չարան այնպէս գը-
թայր, ոչիւրեք ես առաւել 'ի ձեզ

Digitized by Google

տառապեալս։ Զամենայն ինչ թող-
էք և զհետ գորա շրջիք. զինչ ասէ
ձեզ՝ լուարուք, և զամենայն բարի
կամս ձեր՝ դա կատարէ։ Անդէն
իսկ 'ի տեղւոջդ փոքր մի աղէխար-
շեցայք 'ի տապոյ փառաց գորա,
արագ արագ թանձրացոյց զամպն
'ի վերայ ձեր. եթէ սակաւ մի յա-
մեալ էր՝ և դուք և տեղիդ բոցակէզ
լինէիք. նա և 'ի բնական ջերմու-
թենէս ատոր են տեղիք, ուր ա-
մարանի հրդեհք բորբոքին. և եթէ
մանաւոր լոյս այդպիսի սաստիկ
տապով հարկանել՝ ի՞նչ կարծես
զինքնածագն լոյս, եթէ թոյլ տայր
որ ունէր զծով և զցամաք՝ առ հա-
սարակ կիզոյր։ Յայնմ լուսոյ ճա-
ճանչ սակաւ մի երեւեցաւ Պաւղո-
սի, թէպէտ և ոչ այրեաց զմարմին
նորա, զլոյս աչաց նորա եկէզ, թէ-
պէտ և այլ շնորհեցաւ նմա՝ զառա-
ջինն կորոյս։ Ոլորմութեամբ իւ-
րով ծածկեալ ունի ինքն զինքն,
զրէ թէ ոչ բաւեն տեսանել զաս-
տուածութիւն նորա։ Տեսէր, ուր
խոնարհութեամբ խօսի Աստուած

Digitized by Google

ընդ արարածս՝ զմարգասիրութիւնն
իւր յայտնէ. եթէ որպէս էրն՝ և
յայտնէր զինքն, եղեալքս յապաւակա-
նութիւն գառնային առաջի նորա։

Արդ մի՝ տէր Պետրոս բարիոք
թուեսցի առնել զմա տապաւարս,
զի չէ ժամանակդ այգպիսի գործոյ,
և ոչ գու ունիս կազմած շինողաց.
չես տեղեակ հիւանութեան, և ոչ
գիտես յորմ կարգել քարինս։
Վարդապետ անուանեցաւ և զիւր
արուեստն ոչ թաքոյց 'ի քէն. բայց
եթէ գու մուրացկոտ ինչ ի՞ցես, ես
ոչ գիտեմ. հանապազ քո առաջի
գործեաց և գործէ, և յոյժ կամի
զի ուսիցք և բանիւք և գործովք,
որպէս ինքն առանց մարմնաւոր աշ-
խատութեանց վարէ զարուեստն,
'ի դոյն նահատակութիւն և զձեզ
կրթէ։ Մի ընդ քուն խօսիր և մի՛
զՀշմարտութիւնն երաղակոծ ե-
ղեալ՝ այլ ընդ այլոյ պատմես.
յերկնաւոր մանրագործս հոտոտե-
ցար, զհետ հետոց դորա ուսիր վե-
րաբերիլ. 'ի ստուերաշուք տարերցս
ելանել փութացիր, քան նստել

ընդ սովաւ. յանապական լուսոյն
'ի ծմակային տեղիս մի աղաչեր
բնակել զայդպիսի չքնաղ լոյս. թէ
և ջրայինքն տեսանէին՝ 'ի ցամաք
գիմէին, և եթէ 'ի սանդարամետա-
կանան ծագէր՝ 'ի վեր կորզեալ ա-
ծէր զամենեսեան. եթէ գոյր իշ-
խանութիւն՝ հրեշտակաց թողեալ
զայն երկնից լոյսն՝ առ այդ լոյսդ
իջանէին։ Այդ լոյս յերկնից յեր-
կիր երեւի, զերկրաւորս յերկինս
տանի հանէ. և յորժամ յերկրէ 'ի
վեր ծագէ՝ զվերինսն 'ի վայր խո-
նարհեցուցանէ. այդ լուսով եառեալ
Յակոբ զտէր լուսեղէն սանդղոցն.
'ի լուսեղէն տեղիս բնակեալ էր Ե-
ղիա, զայն լոյս թողեալ՝ առ այս
լոյս խոնարհեցաւ և եկն. յայդ լոյս
աւանդեալ էր Մովսէս, աղդեցաւ
նմա 'ի Նաբաւ լերինն, փուլթացաւ
եկն առ անձկաքիդ։ Տեսանես,
զիսրդ փարին երկոքեան զլուսոնն.
Հայդին բազում բանիւն զոր խօսին
ընդ նմա. 'ի ծագել այդ լուսոյ՝ ա-
րեգակն խաւարեցաւ, որպէս աս-
տեղք յարեգականէ. արեգակն 'ի

Digitized by Google

գմանէ ջերեւեցաւ։ Եւ քեզ յորժ
երանի տամ, զայդ տեսեր և յայն
հրաւիրեցար. ամենայն աշակերտ
զվարդապետին արուեստն փուԹայ
ուսանել։ Ո՞Չ 'ի քոց տաղաւարաց
անտի եհան դա զքեզ. խղկուն իմն
արարեալ ՀԵր 'ի ծովեզերին, վասն
այդր լուսոյ՝ եւ Թողուլ ՀԵզ զայն.
զի յայդ Թեւակոխեալքք, ընդ այդ
ընդեալքք, զայտի եկեալքք, 'ի դոյն
խոկալքք, դմին արժանի լինիք ըզ-
գենուլ։ Զի՞նք տեսեալ զազգ Թըռչ-
նոցդ. Հագուցն յորժամ Թեւքն
Թաւացեալ հաստանան՝ ոչ ընԹայս
ունին 'ի վերայ բուսնոցն, այլ 'ի
հայրենի արուեստ վերաբերին. զոր
տեսանեն՝ զմտաւ ածեն զայն.
մինչդեռ մատաղաբոյս են Թեւքն՝
անդէն 'ի տեղւոջն ստէպ ստէպ
շարժին. յորժամ բոլոր վարազա-
Թեւք աճեցեալ մեծանան՝ տակա-
ւին 'ի վեր վազեն ոստախաղաց լի-
նելով և աներկիւղք եղեալք յան-
կանելոյ, ապա բարձրացեալ 'ի վե-
րոյ օդոց ճախրեն զլերամբք, Թը-
ռուցեալ առ ամպովք քերեն, ան-

կասկածք անցանեն գնալ յերկրա-
սոզ միասակարացս ։

Օրինակաւ իմն ասէր զձեզ ուսու-
ցանէ . կրթեաց 'ի նշանս և յա-
ղուռեասս մեծամեծս , զի ամենայնիւ
զձեզ յինքն սպասաւորեալ միա-
ցուսցէ . զի և դուք զայլս 'ի մա-
հուանէ 'ի կեանս որսասջիք . արար
զձեզ կիրթս և հմուտս և տեղեկա-
գոյնս . զի իցէք պատճառք կենաց
ամենայն աշխարհի ։ Բայց դու որ
ոչ էիր 'ի լերին անդ , մի իբրեւ զա-
նուն լուսոյն լսես՝ առ այսմ լոյս
հարցեն , կացցեն միտք քո . զայս
լոյս հանապազ տեսանեմք , ոչ յի-
մարիմք և ոչ թմբրիմք , և ոչ ամե-
նեւին երկեւղ ինչ անկանի 'ի սիրտս
մեր . այլ որ զցայդն եմք՝ նոյն եմք
և զցերեկն . վասն զի նիւթեղէն ա-
ղարարած է , և մեզ 'ի սպասաւորու-
թիւն առեալ . պղտոր , մթին , փո-
շէխառն , մրրկեալ , խլթացեալ տե-
սեր , և ոչ զերկինսն վերինս կարէ
ցուցանել . և այնչափ օտար է յայ-
նըմ լուսոյ՝ որպէս և նկարեալն 'ի
կենդանւոյ ։ Որպէս և ինքն աս-

Digitized by Google

աստուածութիւնն բազում մասամբք երևեցաւ մարդարէիցն, և մի ոք 'ի նոցանէ զԼՅստուած ոչ կարաց տեսանել. այլ նմանութեամբքն որով տեսին՝ բաւական համարեցան. հանգեան կամաք իւրեանց և կատարեցան բանք նոցա գործովք. որպէս և այսօր 'ի լերինն երևեցաւ, այն է զոր հանապազ տեսանէին. այլ ոչ այսօր նոյնպէս տեսին, և ոչ այլ ընդ այլոյ զայլ ոք Քրիստոս տեսին։ Որ էրն զնոյն տեսին, ոչ նոյնպէս գձուձ. փոքր մի վերագոյն քան զառաջինն տեսին և թմբրեցան 'ի նշանաց անտի. և եթէ աւելի քան զձեզ կարծէիք՝ այլ ոչ ինչ 'ի վեր հայէին միտք ձեր։ Աստուծոյ նշանագործութիւն բոլոր արարածքս են. զաշխարհս ոչ 'ի նշանս ինչ արարեալ է ումեք, զի և գոյր իսկ ոք ոչ յառաջ քան զաշխարհ. և նա բնութեամբ ունի զբարերարութիւնն. զոր ինչ կամի՝ կարէ առնել, ոչ 'ի պէտս իւրոյ անկարօտ բնութեանն, այլ 'ի յեզելոցս 'ի լրումն առանց պակասութեան. և

զմարդ սիրէ քան զբոլոր արա-
րածս. և կամի 'ի ձեռն նշանացն՝ զի
զանեղ բնութիւնն ծանիցեն, և 'ի
ճանաչելոյ անտի լիցի սիրոյ բարե-
կամութիւն. և գարձեալ եւս վե-
րագոյնս ձգիցէ, որպէս թէ իւր իսկ
առնիցէ գահակից։ Զոր և այսօր
առ ձեզ նորին սիրոյ եցոյց զօրու-
թիւն, ոչ երկրաւոր նշանօք, այլ
երկնից մասնաւորութեամբ. ցայս-
օր զմարմնականն տեսանէիք իբրեւ
զմարդ, վարդապետ կարդայիք,
ըստ մարդկութեան եւեթ իմա-
նայիք զզարմացումնդ. վասն այսո-
րիկ փարատեաց 'ի նոցանէ զմար-
մնաւոր տգիտութիւնն, զի երկնա-
ւոր յայտնութեամբն կրթեսցէ ըզ-
նոսա, և մի՛ հմակ զմարմնակա-
նօքն եկեսցեն. որպէս և ասէ գիրն,
եթէ Յայլակերպս եղեւ առաջի
նոցա։ Յայլակերպան ոչ այլ ինչ է
իմանալ, այլ աստուածակերպ երե-
ւեցաւ առաջի նոցա, զի և զնոսա
յայն կերպարանս փոխեաց 'ի ժա-
մանակի իւրում. կրթեցան աչք նո-
ցա հայել 'ի մարմնաւորութիւնն

տեսան. ոչ կարացին խորհուրդք նոցա համբառնալ յերկինս. ընդ-հարան աչք նոցա 'ի լոյս փառաց նորա, կարացին զարժանի էութիւն նորա իմանալ։ Ի բազում բարձր տեղիս եղեալ էին նոքա ընդ տեսան, այլ ոչ մտօք. այնպիսի տեսիլ եցոյց նոցա այն օր զքմանալի լոյսն, զի կրթեսցէ զնոսա յեւս առաւելութիւն։ Ըստ մարմնոյ 'ի լեառն էին, մտօք վերացոյց յամենայն աշխարհական ցանկութեանցս. բարձր է լեառն քան զքաղաքս. զնոսա քան զբնաւ աշխարհս բարձրացոյց։ Երբեմն էին ընդ տեսան 'ի Գալիլեայ 'ի լեառնն՝ ուր զերանութիւնն աւետարանեաց նոցա. բանս երկնաւորս լուան, այլ միտք նոցա ոչ ինչ բարձաւ 'ի յերկրաւորացս. իսկ ասա բանիւք ինչ ոչ խոստեցաւ ընդ նոսա. լուսով երկնացոյց զլեառնն, և լուսեամբ երկնաւորս արար զնոսա։

Է իսկ 'ի բնութեանս մերում, յորժամ շրջիմք 'ի բազմամբոխ քաղաքի, զքաղաքական կարգն սի-

Digitized by Google

րեմք ուսանել. յաճախագոյն պրշ-
նուամբ ընդ փառս երկրաւորս, և խո-
նարհին միտք մեր յիրս 3 երկրա-
ւորս ապականացուս, և եթէ ոչ մե-
ծաւ պատրաստութեամբ զգոյշ
կայցեաս անձին քում՝ հաստիւ կա-
րասցես ապրել 'ի պատիր զբօսա-
նաց աշխարհիս։ Վասն որոյ և Մով-
սէս հանեալ զժողովուրդն յԵգիպ-
տոսէ, շրջան առ յանապատի անդ-
ամս քառասուն, և ապա կարաց լի-
նել նոցա օրէնսդիր. իսկ իբրեւ
բնակեցան 'ի քաղաքս բազմամարդ-
իս, և զեղեալ օրէնսն ոչ կարացին
պահել. և է ճշմարիտ, որ ընդ եր-
կիրս պշնու՝ զերկինս ոչ կարէ տես-
սանել։ Ապա և տէր մեր իբրեւ յԵ-
գիպտոսէ եհան զաշակերտսն 'ի
լեառն անդր և ուսոյց նոցա զանգիր
օրէնս երկնից. քանզի և մեր տեղին
առաջին անգիր էր։ Գիր զմարմնա-
կանացն խօսի, անգրութիւն զան-
մարմին էութիւնն ցուցանէ։ Գիր՝
զմահն Մովսէսի պատմէ, իսկ ան-
գրութիւն՝ զյայտնութիւն տեառն
առ աշակերտսն։ Գիրն ինքն անցաւ

կան է, և զանցաւոր աշխարհս արկանէ ընդ պատմութեամբ։ Անգիրքն 4 յինքեան գրէ զանցաւորս, զի անանցս արասցէ։ Գիրն զվերանալն Եղիայի նիւթական պատուական՝ նոքա ասէ. անգրութիւն զերեւումն տեսան և զԵղիայեանց. ոչ իբրեւ այլք յայլում նասեալք և եկեալք, այլ ինքն ինքեամբ երեւեցաւ 'ի վերոյ քան զերկինս. ոչ այրեցող բնութիւն՝ մարմնականացս ահ արկանելով, այլ լոյս փափուկ և արարող, որպէս և ժառանգաւորաց արքայութեան, յանմարմնականաց տեղւոյն զգենուլ։ Այնպիսի տէր երեւեալ և ըստ իւրում էական բնութեանն շնորհեաց և ծառայիցն զնոյն փառաւորութիւն. զի եթէ ոչ այնպէս էին, և ոչ մերձենալ կարէին 'ի հուրն ամենակէզ։ Եւ Պետրոսեանք որք տեսող են աստուածային փառացն, և նոքա 'ի վեր կորզեցին 'ի ծանր մարմնականացս, հասանելով մինչեւ յիմանալի հրեշտակաց բնակութիւնս. անցեալ կային գեր 'ի վերոյ մահուամբ, որ

պէս և երեքն՝ սոյնպէս և երիւքն. ոչ միայն չերկնչել 'ի մահուանէ, այլև 'ի բազում տեղիս հալածական առնել զմահ 'ի մարդկանէ. քանզի յոյժ մեծացաւ աղքատութիւնն նոցա։ Եւ ելին իբրեւ զերկչոտս գտանել 'ի վերոյ քան զերկեւղ. եւ ելին իբրեւ ընդ որդւոյ մարդոյ, զնոյն տեսին անդ Որդի Աստուծոյ. եւ ելին տգիտացողունք, ուսան անդ զկատարեալ գիտութիւն. եւ ելին ընդ այնմ զոր գիտէին ծնեալ 'ի կուսէ. իմացան անդ զնոյն ծնեալ 'ի հօրէ յաւաջ քան զաշխարհս. եւ ելին ընդ այնմ՝ որ մկրտեալն էր 'ի Յովհաննէ, տեսին անդ զնոյն՝ որ բնակեալն էր 'ի Ճառագայթս անմատոյց լուսոյ փառաց իւրոց. եւ ելին ընդ այնմ՝ որ հետիոտս վաստակէր գնալով, զնոյն իմացան անդ որ նրստի 'ի կառս քերովբէականս. եւ ելին ընդ այնմ՝ որուն հրէայքն սպառնային զմահն, զնոյն գիտացին տէր մահու և կենաց. եւ ելին ընդ այնմ՝ զոր ազաչէին մի մատնել զինքն 'ի մահ. իմացան եթէ ոչ սա երթայ

'ի մեռեալս՝ Աբրահամեանք ոչ կարեն գալ առ Մովսէսեանս. և զոր արդեալուին 'ի մահուանէ, յառաջ քան զժամանակն փրկութիւն առանել զմահ նորա։ Արքայութեան պատճառանաք եհան զնոսա 'ի լեառն անգր. իմաստնացայց եթէ առանց մահու Միածնին ոչ ոք կարէ ժառանգել զարքայութիւնն։

Եւ իբրեւ երկոքեան հատածքս այս ունին յինքեանս զերկնաւորս և զերկրաւոր բարութիւնս, առ ի՞նչ արդեաք պատուիրէր տէր մեր աշակերտացն և ասէր, ամենեւին չառնել ոմանք զմեծ յայտնութիւնն որ երեւեցաւ նոցա։ Այս սովորութիւն է վարդապետութեանն Քրիստոսի. յորժամ զմարդասիրութիւնն ցուցանէր բժշկելով առ ախտաժեռս նոցա բազմաց 'ի նոցանէն զնոյն պատուիրէր, Մի՛ ոմանք, ասէ, ասիցէք վայրապար կամ 'ի գեղս կամ 'ի քաղաքս. զի և զոր զնոյն ուսանիցիս չառնել աշխարհագոյժ զողորմութիւնս քո. ապա եթէ պիտոյ եւս է ցուցանել, փո-

խանակ բանից գործքն քարոզեաց-
ցեն։ Աստուած զբոլոր աշխարհս
արար և եռ մեզ, և երախտիս ինչ
ոչ համարեցաւ մեզ, բայց միայն
ճանաչել զնա և զհետ երթալ կա-
մաց նորա։ Պատուիրեաց աշակերտ-
ացն լինել աստուածանման. քան-
զի ժառանգ իւր հաստատեաց զնո-
սա և նոքօք զամենայն աշխարհ.
յորժամ Աստուծով առնիցեն զա-
մենայն մեծամեծս վարդապետին
իւրեանց, ծածկագիտին միայն ա-
ւանդեսցեն զխորհուրդն։ Դար-
ձեալ և յոյժ խնայեաց 'ի նոսա. մի-
թէ ըստ մարմնոյ ինչ պարծեսցին
վասն մեծամեծ սքանչելեացն՝ զոր
և գործեցին և տեսին անդ. զի ընդ-
մէջ թշնամեաց շրջէին և ոչ բարե-
կամաց, և աւելի առաջի կեղծա-
ւոր մեկնչաց, որ իբրեւ զճանճս կե-
զասէրք էին, ուր գտցեն թարախս՝
առաւել եւս զայրացուցանեն ըզ-
վէրն. չարագոյն եւս քան զայս լի-
նէին բանք նենգաւոր մարդոց. որ-
պէս և եղեն իսկ նոքա պատճառք
մահու ժողովրդեանն, ոչ միայն

հոգածին մարմնոյ, այլ և անմահ ոգւոյ սպանողք։

Պատուիրեաց նոր նորոգելոցն՝ որք արբին զճաշակս նոր գինւոյն, մի արկցեն 'ի տիկան զզօրութիւն գինւոյն 'ի հինան, զի ոչ հանգարանեն ընդունել զոյժ նորա. արգել զնոսա 'ի մեծ վնասէն. քանզի գիտէր եթէ տիկքն պատառին և գինին հեղուս 'ի կորուստ նոցա, որպէս առ Կայիափայիւն իսկ երեւեցաւ. զի յորժամ տեսանիցէք զորդի մարդոյ զի նստի ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ, իբրեւ զտիկ հին ցեղաւ 'ի պատառել պատմուճանին իւրոյ. բոլոր ինքն հեղաւ անկաւ յաստուածային աստուծանէն. և եթէ 'ի տեսառն բանից անտի այնպէս վարկան անկան գանալիք, զի՞նչ համարիցիս դու՝ եթէ յաշակերտացն անտի լուեալ էր վասն երկնաւոր ոգւանշելեացն. ո՞չ տեսա իբրեւ զհուր բորբոքէին ընդդէմ նոցա, այրէին զանձինս և զնոսա առ հասարակ։ Քանզի յորժամ լսէին 'ի նոցանէ՝ անդէն հարցանէին զնոսա,

Digitized by Google

զինչ էր առաւելութիւն վերին տես-
լեան 5 ։ Եւ եթէ վասն Մովսէսի և
Եղիայի պատմէին նոցա՝ սուտ հա-
մարէին , զի ոչ կարէին յայտ ուրեք
ցուցանել . թէ ասէին՝ եկին երեւե-
ցան և գնացին , զայն ոչ արդար հա-
մարէին , քանզի ոչ ունէին զհաւա-
տոցն գիտութիւն . յայնժամ և զոր
աչքն իսկ տեսեալ էր 'ի տեառնէ՝
չհաւատային ։ Դարձեալ թէ և
վասն սպիտակ ձորձոցն ինչ ասէին ,
կրկին կորուստ կորստականացն իսկ
հասանէր , կամ լսէին իսկ ոչ զբանս
նոցա , կամ 'ի մէջ բերէին զսպի-
տակ ձորձս նոցա . քանզի երկրա-
պիշաք միայն էին և անհաւատ լսե-
լիք , զիմանալի յայտնութիւնն ոչ
կարէին տեսանել . և նոքա 'ի լերին
անգ մարմնաւոր ինչ յայտնութիւն
ոչ տեսին , այլ երկնաւոր զօրու-
թիւն իմանալով , զայն՝ որոյ 'ի յայտ-
նութիւնն նա միայն գիտէ , և ում
կամի ինքն յայտնէ ըստ մասանց , և
մեռացն միայն ծոց բաւէ ժողովելով ,
այլ ոչ բանիւ պատմել և սփռել 'ի
լսելիս ուրուք . զի որ բանիւ գծա-

Digitized by Google

գրի՝ ընդ մարմնաձեւութեամբ անկանի երեւութեն նորա. իսկ երկնաւոր փառքն յայսմանէ վերագոյն են, և 'ի մարգկանէ և 'ի հրեշտակաց։ Լաւ Պաւղոսի առաքելոյ, որ ոչ միայն 'ի լեառն բարձրացաւ, այլ և յերկինս երրորդ և 'ի դրախտն, և զգաստութիւն արքոցն ետես, և զբարբառ պարգեւաւորին լուաւ, այլ դէմ յանգիմանն ոչ կարաց հանգիպել. և բարբառ որ եկն նմա 'ի վերուստ ըստ մասանց՝ զգօրութիւն բանիցն ոչ ումեք կարաց երկրորդել։ Նոյնպէս և վասն երկնաւոր պարգեւացն՝ զի պատրաստեալ պահին՝ զայն ասաց. այլ 'ի պատուական երկրաւորաց ասոյն նմանել ումեք ոչ կարաց, իբրեւ է Ճշմարիտ հանդերձեալ. և մեք յայն եմք յուսացեալք՝ զոր Պաւղոսն ետես և պատմել ոչ կարաց. հաւատացեալք 'ի Քրիստոս լիով իմանան և զիմացեալն ասեսանեն. և յուսով այնպէս ասին ուսնիմք՝ որպէս և երանելին Պաւղոս։

Արդ վասն այսր ամենայնի զոր

առաքեալքն 'ի լերին անդ տեսին հոգւոյ սրբոյ, չհրամայեաց պատմել 'ի լսելիս թերահաւատ ժողովրդեանն. մի՝ զի կարէին իսկ ոչ նոքա պատմողք լինել. միւս եւս՝ որոց պատմէին՝ նոքա ոչ էին արժանի լսել: Որպէս և ինքն տէր յառաջագոյն ուսոյց զառաքեալսն. Մի տայք, ասէ, զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց. շան՝ սուրբ և պիղծ կերակուր ընդ մի համարեալ են. և խոզի քան զպատուական մարգարիտ ընդ պարանոցի՝ խոհերական տիզմ, յոր թաւալի՝ լաւ թուի. զայս տեսանել՝ չար պարգեւաց տուողին թուի, և եւս չարագոյն արտաքին տեսողաց: Վասն որոյ և տէր մեր զլուսաւոր խորհուրդն՝ լուսոյ մանկանցն յայտնեաց, զի եղիցին վկայք ճշմարտութեանն լուսոյն որ երեւեցաւ նոցա 'ի լերին անդ. և նովին լուսով լուսացեալք կայցեն մնասցեն իբրեւ զանսուսեր ճառագայթս. և նոքին եղիցին քարոզք լուսաւորութեան նորա, որք

եղեն իսկ և կատարեցան. և ամենայն արարածք որք նստէին 'ի խաւարի և 'ի ստուերս մահու՝ յայն լոյսն յանանց դիմեցին, և նովին լուսովն լուսաւորեցան և լուսաւորեցին մինչեւ յերկրորդ յայանութիւն նորին լուսոյ. և նոյն ասէր գալոց է լուսաւոր ամպովք յերկնից ամենայն լուսաւոր զօրօք երկնաւորօք. և 'ի նոյն լոյս լուսաւորին մեռեալք, և կենդանիք ամենայն արժանաւորք՝ յանփոփոխս և յանվախճան յաւիտեանս։

Զոյժ կասկած եղեւ մտաց իմոց իբրեւ մերձ եղէ 'ի կատարած ճառին. ապա յիշեցի եթէ իրք անխնդիրք մնացին 'ի միջի սորա. քանզի փոքր 'ի շատէ տեղեկագոյն եմ խուզող մտաց՝ որ անմեղութեամբ քննեն զզօրութիւնն բանին 'ի շահն անձանց և 'ի փառս սուրբ եկեղեցւոյ։ Տեսանեմք իսկ ասէն և 'ի մերում աշխարհիս, բազումք վարեցեալք առաքինութեամբ անսխալ հաւատովք ըստ առաքելական կանոնին, յորոց ցնծացեալ բերկրի

սուրբ եկեղեցի հեթանոսաց։ Զայս հաւատ յանձին բերելով դեգերէին յուսումնասիրութեան ուխտաւոր մանկունք Հայոց մեծաց. զանձինս պարապեցուցեալ 'ի վաճառաշահ օգտից, ոչ ինչ ընթանան զհետ ընչաւէտ մեծութեան. այլ գործ հանապազորդ այնպիսեացն՝ պահք և աղօթք, զանձինս պահել յամենայն ոգէսպան ախտից։ Այլ հարցք և խնդիրք վասն ծածկեալ բանին զոր ընթեռնուն 'ի սուրբ կտակարանս, գիտեմ զի հարցանեն յայսմ ճառի ցմիմեանս և ցիս. Յարեաւ, ասեն, Մովսէս 'ի մեռելոց մարմնով և եկն 'ի Նաբաւ լեառն առ տէրն մեր. Եղիայի ահա էր ինչ խափան, որպէս վերացաւն երագ՝ ահա երագագոյն եւս գայր. Մովսէսի ընդ այն ինչ ոչ զարմանամք եթէ ընդ Եղիայի արագութեամբ գտաւ. այլ եթէ մարմնով յարեաւ և կամ եթէ հոգւով կերպարանեցաւ առաջի նոցա։ Եթէ մարմնով յարեաւ՝ ճշմարիտ վիշտ եղեւ նմա, այն որ աղաչէր զԱ-

տուած միանգամ չմեռանել՝ կրկին արդեւք զմահ ճաշակեաց. մանաւանդ զի զԵզիա եռեռ յանմահութեան, և զտէր հայրենի փրաւոքն յարքայութեան. և ինքն անդ եւս 'ի հոգոյ եկեալ և անդէն արագ արագ գառնայր. կարի գժուարագոյն է տեղիդ ասեն։

Ինձ ոչ ծանրագոյն թուի հարցուածդ. է ինչ որ 'ի գրոց ունիմ առնել անդրէն պատասխանի, և է ինչ որ յանգիր էութենէն՝ հայելով յաստուածային զօրութիւն. և ընդդէմք իսկ ոչ են միմեանց. քանզի գիրն 'ի լսելիս ազդէ զաստուածային պատուիրանս, իսկ անդրութիւնն՝ յաներեւոյթ մտացն տախտակս. և են երկոքեան աստուածատուր շնորհք, զոր աչք տեսանեն, զթուանք ընթեռնուն, ականջք լսեն. առանց գրոց միոք բերին զմեկնութիւն։ Արդ քաջ մտաւորացն՝ մեծ է որովայն և անձանձրոյթ է ծոմն, և անծանրանալի է բազմութիւն բեռին. որչափ և անկանի 'ի ներքս, ոչ յագեալ շատաս-

նայ բաղմութեամբն. ապաշնչելով զԱստուած՝ ընկալեալ զերկուսին և երրեկին կարէցէ հաստատ լինել. որպէս և է ասեալն, որք առանց գրոյ խորհրդոյս եղեն 'ի տէր Որդւոյն Աստուծոյ՝ Հիմարութեամբ հաստատ եղեն գրելոցն. և ոչ ինչ ծածկեցաւ 'ի նոցանէ յանգիր օրինացն Աստուծոյ. որպէս և ինքն իսկ առաքեալ ասէ. Զի այն զոր կամք յաղօթս՝ որպէս արժան իցէ ոչ գիտեմք, այլ ինքն Հոգին հաստատէ 'ի թիկունս՝ 'ի հեծութիւնս անմռունջս բարեխօսէ առ Աստուած: Ամենայն սուրբք առանց բանի պատմութեան խօսին ընդ Աստուծոյ, և առանց ձայնի արձակելոյ 'ի վերս՝ լսեն կամաց նորա. և զոր ասեն և զոր լսեն՝ ընդ գրով արկանել ոչ կարեն. և առաքինի գործովք իւրեանց յայտնի առնեն զանգիր օրէնսն Աստուծոյ: Եւ յորժամ զայսպիսի զօրութիւն յոգիս մեր հեռատեսութեամբ, կարեմք զծածուկս բանին Աստուծոյ ծածկապէս խմանալ, և զառուչութիւն պարգ-

Digitized by Google

գեւին որ շնորհեաց մեզ՝ արտասաբե-
ռեմք բարբառով. զի և յայլոց լսե-
լիս ազգիցն հնչումն երկնաւոր։

Յարոյց Եղիա զմեռեալ և երկուս
Եղիշա, և կրկնամահ ոք ոչ ասէ նոցա. այլ մի կեանք և մի մահ. և ասէր մեր յարոյց զմեռեալս, նոյն ասի և նոցա. այսքանք էին և Մովսէսի. քանզի յառաջին մահուան իւրում ոչ հիւանդացաւ. ինքն ասէրն կոչեաց զնա 'ի լեառն, և ինքն ասէրն որպէս և զասէր առանց չարչարանաց առանգեաց զնա գերեզմանին։ Այսմ և մահ իսկ ոչ է արժան ասել՝ այլ և փոփոխումն. Դաւիթ և զայս քուն իսկ անուանեաց. Եա ննջեցի և 'ի քուն եղէ, զարթեայ և ասէր ընդունելի մեր է։ Դու իսկ որ հարցանեսգ՝ ոչ հանապազօր 'ի քուն մտանես, ընդ առաւօտն յարուցեալ կանգնիս. ոչ ինչ արարանիս յազագս յառնելոյն. զի գիտես եթէ անդէն հասանէ ընդկոզմանել։ Ապա թէ ասիցես թէ այս գիւրագոյն է և այն գժուարագոյն, մի՛ ասեր, ասա կարծես, հազար

անգամ մահն Սովսէփ դիւրա-
գոյն է, քան զքունդ քո։ Եթէ
քաղցեալ և ծարաւի՝ի քուն մնա-
նիցես, յարս ուտես և ոչ յագիս.
աղքեր աղքեր շրջիս և ոչ ըմպես.
և եթէ բռնադատեցար ինչ աւելի
քան զչափն անքուն, զառաւօտն
ցանկաս տեսանել. և եթէ պայման-
նաւ կերակրոցն և առողջութեամբ
մարմնոցդ դէպ եղեւ քեզ շարժել
զաղտեղութիւն, և կամ լինիս երա-
զակոծ, այսր և անդր միտքդ դըր-
գուին, որով՝ի տուընջեան քեզ
շարաւ թուիցին. և չինք իսկ ամենե-
ին խաղաղութիւն՝ի մերում շարժ-
մունս։ Իսկ յայսմանէ տէրն մեր
զՍովսէս պարկեշտադոյնս ամփո-
փեաց. ծերութիւն ոչ թարշամե-
ցոյց զգեղն նորա, և հիւանդութիւն
ոչ ապականեաց զմարմին նորա. ոչ
յառաջնում նուազին հեծու-
թեամբ էջ՝ի դժոխս, և ոչ՝ի վերջ-
նում հրաժարեալ՝ի տեսանէ դան-
գաղեցաւ ինչ թերեւս. և վասն
այնորիկ Աստուած ինքնին իսկ ամ-
փոփեաց 6 . . սա՝ի մահ անդր. ՝ի

ձեռն նորա փոխեաց զնա և ծառ-
կեաց. և ձայն նորա կոչեաց զնա, և
զամպն հովանի արար 'ի վերայ նո-
ցա. նոյն ինքն փուլթանական ած առ
սիրելին իւր զՄովսէս, որպէս և
ինքն ասէրն մեր ասէ. Հայր յարու-
ցանէ զմեռեալս և կենդանի առնէ։
Յարոյց Որդի զՂազար կարգալով
առ Հայր. յարոյց զՄովսէս Հայր
միաբանութեամբ Որդւոյ, զի երե-
ւեցան իսկ առ նմա. ըստ այսմ ի-
մաստիր զանքակ միաբանութիւնն
սուրբ Երրորդութեանն, և յարար-
ձութեան և 'ի փրկութեան և 'ի
նշանագործութեան և 'ի յարու-
թեան նորոգմանն։ Եւ վասն Մով-
սէսի յարութեանն մարմնոյն մի
ինչ ոկարասցին միոք ասրուք. չէ
Հաս բանիցս այսոցիկ առ ակ օրինա-
կի, որպէս մեծատառն 'ի գԺոխս և
կամ Աբրահամու և Ղազարու յար-
քայութեանն. այն զհանգերձելոցն
յայտ առնէ։ Տեսեր և յաշակերտ-
սաց անտի չիք ոք այնմ վկայ. քան-
զի ծածուկքն Աստուծոյ միայն են
յայտնի. իսկ որ Հշմարտիւս երե-

ուեցան, զայս և մարդիկ ընդ Աստուծոյ կարծացին տեսանել։

Բայց ես յոյժ ապաշեմ զամենեսեան, ինչ որ յերկրի և այսր է՝ բաղդաւոր այն է որ քննի խմաստուն մտաց, և սակաւ այն է որ ծածկի 'ի մէնջ. իսկ առ աստուածութիւնն և ոչ քան զսկան քթթուումն՝ անկանի ընդ գիտութեամբ. զի ես վէմն ըզջուրն՝ զայն գիտեմք ամենեքեան. որպէս ես, ծածկեալ 'ի մէնջ. որպէս երթայր զհետ նոցա, թարգմանէ մեզ Պաւղոս. զիարդ գնայր առանց ոտից, զայն և ոչ Պաւղոս գիտէր. նոյն իսկ Պաւղոս զվերանալն իւր յերկինս՝ զնշան Ճանապարհին եթէ հարցանես՝ ոչ գիտէ պատմել։ Զի եկն Մովսէս 'ի մեռելոց մարմնով՝ հաւատամք ճշմարիտ. որպէս եկն, և ոչ ինքն Մովսէս գիտէ։ Հաւատամք եթէ կերան անմարմինքն զՃաշն Աբրահամու. նոյնպէս հաւատամք եթէ եկին Մովսէս և Եղիա առ տէրն մեր 'ի Թաբովր. և եթէ ոք յայսմանէ յերկրայս լինի, երանք սիւնքն մեզ վկայեն դարձեալ.

և եթէ այլ ոք անհանձնար մտաքն ա-
սիցէ, եթէ կերպարանաւ միայն ե-
րեւեցան, այդմ չէ հնար. մի՛ հա-
ւատար. ասուեր 'ի հայելւոջէ ե-
րեւին բանք. ոչ ասեն աստուա-
ծային գիրք՝ ուր առակն է. ոչ 'ի
մարգկանէ խնդրեն վկայ, այլ մտաց
իմացուցանեն զմեկնութիւն բանին.
իսկ ուր ճշմարտութիւնն է, յայտ-
նի երեւի պարզաբանութիւնն։

Աստաց Եւայի. Տեսի զառէր յա-
թոռ բարձրութեան. ճշմարիտ էր
տեսիլն. այլ ոչ զորպիսութիւնն
կարէր տեսիլն ցուցանել մեզ. ուր
կամի Աստուած՝ առակօք խօսի ընդ-
ծառայս իւր մարգարէս. և ուր եւս
խոնարհութեամբն խօսի՝ և զինքն
թանձրացուցանէ, որչափ բաւէ մեր
բնութիւնս տեսանել. և վկայս ա-
ծէ հրաշակերտս և 'ի հրեշտակաց և
'ի մարգկանէ արդարոց. է զի 'ի
կենդանեաց և է զի 'ի մեռելոց։
Սոյնպէս և յայսմ տեսլւոջ բարձրամ
ինչ նշանս արարէ Աստուած 'ի ձեռն
Մովսէսի, և մեծարեաց զնա քան
զամենայն մարգարէսն. զոր յարոյց

'ի մեռելոց, զսա տեսաք զի կայր և խօսէր ընդ Քրիստոսի, որպէս տեսաքն և վկայեմք. որպիսութիւն յարութեան նորա՝ տեսան միայն յայտնի։ Այլ զի եկին Մովսէս և Եղիա և խօսեցան ընդ Քրիստոսի, և տեսին երեք առաքեալքն, վկայեմք ճշմարիտ բանից նոցա. և որ յաչս մեր անհնար է. Աստուծոյ ամենայն ինչ հնարաւոր է։

Այլ վասն լերինն գեղեցկութեան և վայրացն վայելչութեան՝ եթէ կամիք ախորժելով ունկն դնել, սակաւիկ մի երկրորդեցից ձեզ ըզտեսիլ յանկաչի տեղւոյն։ Լսելով յաւետարանէն գիտէք ամենեքեան զտեղին. բայց մեր և անձամբ իսկ հասեալ և աչօք տեսեալ, ոչ յաստուկ միայն առանձինն, այլ բազում ընկերակցօք. որոց և կամ իսկ եղեւ ոմանց մնալ'ի լերինն, ոչ ըստ մարմնոյ ախորժութեամբ բաղձանաց, այլ առ գութ սիրոյն Քրիստոսի։ Քանզի բնակեալ են անդ բազմութիւն սքանչելի եղբարց, որք հոգւով յաճախագոյն

վարքին՝ քան թէ մարմնով։ Քանզի թէ ըստ մարմնասէր մեռաց ոչ հայի 'ի տեղի անդ՝ վայելչապէս երեւի քան զառեալս բազում լերանց. նախ զի նիւաս նորա է 'ի մեծ գաղ- տի միոջ յերկրին Գալիլեացւոց. և այլ լեառն ամենեւին հուապ ոչ գոյ 'ի նմա, բայց տեսանելով հեռապոյն. և ինքն է բարձր և բոլորանիստ. և շուրջ զլեառն ունի ինքնապուխ գուբաս ջրոց և խիտ առ խիտս ծառա- ստուանկս բազումս՝ որք ապաստարերին յանձրեւապուռեալս ամպոց, և լինին ազգի ազգի մերոքք քաղցրահամք. և բազումք և այլ համագամք 7 անուշ- շուրթեան. որթք գինեբերքք, որ ի բ- ղեւ թագաւորաց ըմպել արժանիք. զգէմս լերին յաճախապոյն ծառք ձիթենիք և եզջիւրենիք. շորեքեան օգք 'ի նա շնչելով, յոլովապոյն հիւսեալն զարդանաց 'ի նա։ Եւ շաւիղն ընդ որ տեսանին ելեալ է, յոյժ ոպորդ է ելն, այսր և անդր մա- նուանածով արարեալ ճանապարհ. ով և կամի ելանել կալ յապրիա, գիւրաւ զելն 'ի վերս առնիցէ։ Զարդ-

ժամ եկանէ ոք 'ի բուն գաղաթն լերինն, բոլոր գաշտն առ հասարակ յայտնի երեւի, յարեւելից կողմանէ մինչեւ 'ի Յորդանան գետ. յարեւմուտս՝ մինչեւ 'ի ծովն մեծ յաշխարհն Դայդանացւոց, 'ի հիւսիսի՝ մինչեւ 'ի ծովն Տիբերիայ, 'ի հարաւ՝ մինչեւ յայգին Ղաբովթայ եզրայրացւոյ. և ամենայն բազմութիւն վայրացն նստի գեւզ առ գեւզ և ագարակ առ ագարակ, և բազում քաղաքք 'ի մէջ նոցա. և ինքն կատար լերինն՝ հովտաձեւ գոգացեալ. գոն և ծառք սակաւագոյնք և թանձրահոպ բազում 'ի նա։

Եւ 'ի տեղւոջն ուր երեւեցաւ նոցա տէր լուսաւոր պայծառութեամբն, յարեւելից կողմանէ հովտացն, յետ բանիցն Պետրոսի՝ հեռագոյն 'ի միմեանց շինեալ երիս եկեղեցիս, և ոմանքն պաշտօնեայս բազումս, զառեալք և որոշեալք յամենայն մարմնաւոր ցանկութեանց. թէպէտ և կեան մարմնով, այլ ոչ վարին ըստ մարմնոյ քնքշանաց. այնպիսի են առաքինիք՝ զի և

կարծէ զոր ոչ զնոցանէ թէ շարժեա-
ցէ զնոսա կարօտութիւն մարմնոյ.
ոչ երբէք ընկալան յուսմնքէ ոսկի
կամ արծաթ կամ հանդերձ, կամ
քնաւ որ ինչ պիտոյ է մարմնոյ. այլ
որպէս հաճոյ թուեցաւ միաբանե-
լոց ամենեցուն՝ առն իւրաքանչիւր
արարեալ փայատաս երկմաստնի, և
այնիւ խարխարեալ յուզեն զթանձ-
րատոզ հովատացն, սերմանելով 'ի
նմա ցորեան և գարիս, և թէ այլ
ունդք իցեն, 'ի պէտս կերոյ մարդ-
կան. և 'ի չափ հատեալ հատակացն՝
ծայրախուզ հնձելով ոստաշուսի կա-
սեալ մարգացի 8 ատան հողմոցն հո-
սելով զարդիւնս շեղջոցն. և արկեալ
'ի շատեմարանս, զնոյն գարձեալ ին-
քեանք լեսուն 'ի ձեռն երկանի.
մնծուս ատաժանութեամբ օր ըստ
օրէ պատրաստեն զհարկաւոր կերա-
կրիկն. և գարմանին հացիւ և ջրով
լոկով, և ալիւ համեմելով, զոր և
խորոտիկն անուանեն։ Առնեն և այլ
յաւելուած յանուշութիւն կերա-
կրոց. 'ի ձմեռնային ժամանակի քա-
ղեն զնիւ լերինն և թթուեցուցանեն

Digitized by Google

ազիւ և ջրով և զոպայիւ. և որպէս
ինքեանք իսկ ասեն, կարի օգտակար
է 'ի տապ աւուրս խորշակի։ Եւ
ջրքուանի ամենեւին ինչ 'ի վեր 'ի
լեառնն ոչ ելանէ. այնպէս սուրբ
պահեն զելս Ճանապարհին, իբրեւ
թէ ժողովք հրեշտակաց իցեն և ոչ
մարդկան. քանզի են իսկ արդարեւ
իբրեւ զանմարմինս։ Զիք նոցա եւղ
յամանս վասն կերակրոց. բայց ե-
թէ 'ի ծախս անշէջ կանթեղաց որ
հանապազորդ վառեալ այրին յե-
րիս եկեղեցիսն։ Զիք նոցա գինի 'ի
սափորս, բայց եթէ 'ի սպաս տե-
ղուն բաժակին։ Զիք նոցա
դարման պաճուճանաց 'ի պէտս
հիւանդաց, և ոչ պատրաստութիւնք
վասն օտարաց. այլ օտարաց և ըն-
տանեաց հատարակ է նոցա միաբա-
նութիւն. իբր ոչ եթէ ինքեանք
մարդատեսցք ինչ են, այլ մարտ
եղեալ կռուին ընդ ապատամբ մար-
մնոյս, եթէ գուցէ զասպարէզն
չկալեալ ուղիղ՝ զհեծեալն քարա-
վէժ առնիցէ։ Վասն որոյ և ոչ կա-
մին հանապազ Ճաշակեալ. այլ սովո-

բուլթիւն է նոցա քնակեան ամարանի
ապանելով. և ձմերանի հաւաքելով
զաւուրս շաբաթուն. իսկ որ հզօ-
րագոյնքն են 'ի նոսա՝ զոգջոյն շա-
բաթին ձգեալ 'ի գլուխս տանին։ Ա-
պա եթէ ոք երթայր 9 'ի հեռաս-
տանէ առ սէր սուրբ ժողովոյն,
կամ եզեալ ամենեցուն 'ի սովորա-
կանն լուծանել քերան. կարի յոյժ
փոյթ յանձին ունին 'ի հոգեւոր
կերակուրն, զի մի երբէք գադա-
րեսցին 'ի ճաշակելոյ. թէպէտ և
հանապազ ուտեն անդադրութեամբ՝
եւս առաւել քաջցնուն և ծարաւ-
ին։ Ոչ միայն զհարիւր և զյիսուն
սազմոսն արկեալ 'ի վայր ձայնիւ,
այլ բովանդակ զսուրբ կտակարանս
եկեղեցւոյ, որով փառաւորեալ և
ահաւոր ձայնիւք շքեղացուցանեն
զսուրբ եկեղեցիսն 'ի լերին անդ։
Եւ զոր ընթեռնուն բանիւք, և է
զոր ասաջանն փոփոխական ձայ-
նիւք. զգաստարուն ոչ երբէք
առնուլ յապելով փոխանորդու-
թեամբք միմեանց գունդք գունդք
ազգակցաց, յերիս եկեղեցիս բաժա-

նելով հաստատակութեամբ առանց կատարելոյ ունին զկարգ պաշտամանն, զտունջեանն և զդիշերուոյ. իսկ զերեկուանն և զառաւօտին ժամն՝ ոչ եւս փոխանակաւ յաջորդութեամբ միմեանց, այլ միաբանելով ընդ միմեանս լինի բազմութիւն ժողովոյն վերջերորդ քան զայլոց ժամուցն: Եւ մի յերիս եկեղեցիս մեծագոյն է քան զերկուանն, զոր և Տէրունականն իսկ անուանեն. և յերկուս անդ եղեալ են զնշխարս առաքելոցն, որք և հիմնարկեցին իսկ զառեղին այնօր՝ ասելով զանուն երից տաղաւարացն. և անուանեն զնոսա վկայարանս սուրբս, և յիշատակեն զնոսա յանուն Մովսէսի և Եղիայի. և զբոլոր աղօթսն 'ի կիրակէին կատարեն. իսկ յերկուանն եւս երիցանն և անդ զԱստուածն փառաւորեն: Եւ են ամենեքեան մաշկազգեացք, գիտեն և ձեռնակերտիկ արուեստս. ոմն է որ սափրիչդն առնէ, և ոմանք զնոյն նիւթս ապատս գործեն. եթէ այլ ինչ ոչ ունք են՝ գործեն, ընդ լեռանն 'ի վայր

Digitized by Google

իշանելով. և զամենայն զինչ և գոր-
ծեն զարուեստսն՝ ոչ յայլ ինչ ապէտս
օգտի, այլ 'ի գինս ձիթոյ կանթե-
զացն հանապազորդ վառմանն, և 'ի
ծախս օգնեանացն, ուստի զմաշկե-
զէն հանգերձիկն ձեւեն, նոցին և
զնոզաբիրան հայթայթեն։ Դար-
ձեալ հարկատուք են միմեանց սի-
րով. քանզի գոն 'ի միջի նոցա օտա-
րատուք, և յիւրաքանչիւր վաստա-
կոց անգր հարկին. են 'ի նոսա ծե-
րագոյնք, որք ոչ հարկին զպէտս ան-
ձանց վճարել միաբան. վասն այն-
պիսեացն առաւել հոգ տանին քան
անձանց. վասն զի հրեշտականմանք
են, ոչ միայն արտաքին պիտոյիւքն
սիրեն զմիմեանս, այլ և զծածկու-
թիւն խորհրդոց իւրաքանչիւր ոք
ոչ թաքուցանէ յընկերէ. եթէ
յանկարծ շարժեցան միոք ուրուք
յիշելով զկերակուր ուտելիս,
յայտնէ զախտն իւր միւսումն որ
լաւագոյն է քան զնա. միաբանու-
թեամբ աղօթս արարեալ 'ի վերայ
վաղվաղակի եկն յառողջութիւն
անցաւուն։ քանզի և ինքն իսկ

որ հիւանդացաւն՝ տեղեկագոյն գի-
տէ կեռուել ընդ եկամուտ չարին
խորհրդոց , մանաւանդ զի փոր-
ձիւ իսկ զչափ առեալ էր յառաջա-
գոյն , եթէ ընդ կերակուրս մատանեն
ամենայն մեղք 'ի բնութիւն մարդ-
ոյն . եթէ զայն դուռն մեղաց փակ-
կէ ոք , բազում ինչք արդելուն
'ի նմանէ . զոր ոմանք բազմագլուխ
գազան կարդացին զպարարուն ո-
րովայնի ։ Տեսեր , և նոքա նախ
զնա ապանին , և յայլ եւս 'ի ինչաս-
արար գլխոց նորա՝ անեղկեւղք դա-
գաղեցին 'ի լերին անդ , զի յեր-
կրաւոր բարձրութենէն յերկնաւոր
բարձրութիւնան առ տէրն իւրեանց
կարասցեն վերաբերել , որպէս
Մովսէսն և Եղիայն փառաւք երեւե-
ցան տեառն 'ի նմին լերին ։

Եւ ես տառապեալս քան զամե-
նայն մարդ , որ հետեւեցայ հե-
տիոտս ընդ տերտունեան շաւիղն 'ի
լեառն անդ , և աչք տեսի զժողով
աքանչելի եղբարց , աղաչեմ զընդ-
թերցողսդ և զլսողսդ , աղօթս արա-
րէք 'ի վերայ իմ և ձեր հաստարակ .

Digitized by Google

ընդ նոսա ապրեցուք յաւիտեանս զաստուածացեալն Աստուծոյ, և երկնից արքայութեանն արժանի ընտրել 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում փառք յաւիտեանս յաւիտենից։

Digitized by Google

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ԵՂԻՐ. ՑԱՑԼԱԿԵՐՊ. 5

Digitized by Google

Digitized by Google

Ի ՄԵԾԻ

ԱՒՈՒՐ ՅԱՊԱՆԱԿԻՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ՄՈՎՍԷՍԻ ԽՈՐԵ-

ՆԱՑԻՈՅ

ՍՈՒՐԲ ԵՒ ԸՆՏՐԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԱՐԱՐԵԱԼ

ՈՐ Ի ԿԱՐԻԱԹԱՐԻՄ

ՈՐ ԲԵՐԷ ԶՏՕՆ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Տօնախմբութիւն սոնակիս հիաս-
յուսցանէ զսօնողս. զի սատուածային
իր գոյ 'ի սմա, և մարդկան իմն առիթ
կենդանութեան։ Զի որպէս ոյք 'ի
նաւի իցեն, և նաւն 'ի սիրտս ծովու,
ժամանակն Հմեռնային, ալեաց
յանգգնութիւն, հողմոց անչափու-
թիւն, մրրկաց անկարգութիւն, և
նաւն այսր անդր սայթաքեալ 'ի
մթին և յանկոյս ժամու. և ապա
սկսանի միտքն բեկանել, սիրտն
տրտմել և յոյսն հատանել. և ապա

Digitized by Google

'ի բարձունս նայիցի և մի ասասց նշմարիցէ, և յոգւոց հանիցէ. այնուհետեւ սիրան բերկրի և միտքն հաստատի, և ուզկէ զՀանապարհս իւր. այսպէս է և զմեզ իմանալ 'ի ծով կենցաղոյս. նաւ ունել զարարեալ մարմին մեր, յորմէ մարմնովս լինի մեզ ալեք ախտակէս ցանկութեանց. հնչին 'ի մեզ հողմ և մրրիկք խաւարին, այսր անդր ձգեն զմիտս մեր 'ի կորուստս և յապականութիւն աշխարհի. այլ 'ի բարձունս նայելով մեր և տեսանք զլուսաւոր աստղն՝ որ ցուցանէ մեզ զՀանապարհ գիտութեան և իմաստութեան։

Հոգելից մեծն 'ի մարգարէսն որ 'ի գիմաց Աստուծոյ խօսի և ասէ. Խորհուրդն իմ ինձ և իմոցն. և խորհուրդն ոչ առժամայն ունի զյայտնութիւն. վասն այնորիկ խորհուրդ ասի զի ծածկեալ էր 'ի բազմաց. սոյնպէս տապանանկն Աստուծոյ յայտնէր տեսութեամբ և ծածուկ խորհրդով. այլ Մովսէսի և Յեսուայ միայն յայտնեաց

Աստուած։ Ասէ Աստուած Մովսէսի. Արասցես տապանակս յանփուտ փայտից. և զչափս տաց զայնուհետեան և զերկայնութեան. և հրամայեաց տաց ծածկել զնա ոսկւով և արծաթով ներքոյ և արտաքոյ։

Արդ տապանակն խորհուրդ մարդկային բնութեանս. զի որպէս ամենայն փայտ 'ի հրոյ, այլ ոչ ամենայն փայտ ապականի 'ի գիշութենէ խոնաւութեան, և յորդանոյ ընդառակարաց. նոյնպէս և ամենայն մարդ լուծանի 'ի մահուանէ, այլ ոչ ապականի 'ի մեղաց։ Փայտ ասաց առնուլ տէրն՝ Մովսէսի, այլ ոչ զամենայն փայտ ապականացու, այլ զանփուտն ասէ՝ զանապականն, զի փայտն այն ոչ ժամանակաւ ծերանայ և ոչ տեղի տայ ցեցոյ և ոչ փտի 'ի գիշութենէ։ Որպէս և ընտրեաց Աստուած զիւր տուրբ զառաքեալսն և զերջանիկ մարտիրոսս և զարբանեակ կուսանսն և զերանելի տուրբ հայրապետսն, և զընտիր կրօնաւորս ոչ ընտրեցան 'ի մարդկային բնութենէս. և զոր օրինակ

Digitized by Google

ծածկեցաւ փայտան յոսկւոյն և յարծաթոյն ընկղմեալ առատակ փայտին, և միայն փայլէր ոսկին. նոյնպէս և բնութիւնս մեր ծածկեցաւ առաքինութեամբ և փայլեաց աստուածպաշտութեան լոյսն. զի սուրբքն ամենայն ոչ եւս ունին զերկի որդանն՝ որ է ոխակալութիւն որտի, և ոչ ընկալան զխոնարհութիւն, որ է հեշտութիւն և ցանկութիւն աշխարհիս։ Եւ արդ գնալն առապանակին յայլազգիսն զգալուսան Քրիստոսի յաշխարհս նշանակէր. քանզի ամենայն կուռք խորտակեալ բարձան յաշխարհէ։ Այրն որ գոյժ արկ հեզեալ՝ Յովհաննէս մկրտիչ նշանակէ. այլ մեզ պարտ է գալ 'ի մեկնութիւն առապանակին, եթէ զի՞նչ խորհուրդ գոյ 'ի նմա։

"Եւ արար Բեսաբլիէլ զաշտանակն յանփութաս փայտից չորեքկուսի, և պատեաց զնա ոսկով արքայ ներքոյ և արտաքոյ. 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զլայնութիւն նորա, և 'ի կանգնոյ և 'ի կիսոյ զբարձրութիւն նորա. չորք ողոմանեակք 'ի նմա, և երկու

լծակքն՝ որ բաւնային քահանայքն. և քաւութիւն 'ի վերայ նորա, և քերովբէքն որ հովանի ունէին 'ի վերայ քաւութեանն, և երկու տախտակքն 'ի նմա, և բուրվառն ոսկի և սափորն ոսկի լի մանանայիւ և գաւազանն Ահարոնի 77։ Արդ տապանակն յանգիտուս փայտից նշանակէր զանապական մարմինն Քրիստոսի. իսկ պատեալն ներքոյ և արտաքոյ ոսկով արքով զմիաւորութիւն աստուածութեանն ընդ մարմնոյն. զի ոսկին ասուրբ՝ աստուածութեանն է օրինակ. իսկ չափն՝ ժամանակ գալըստեանն. իսկ չորեքկուսի՝ զնուլ ամենազերաց հաւատումն Քրիստոսի, և ոչ որպէս 'ի հնումն միակեալ կալ 'ի մի ազգ. իսկ ողոմանեակքն՝ ըզչորս աւետարանիչս նշանակէ, որք հոգւով արքով լցին զտիզերս. իսկ երկու լծակքն զօրէնս և զմարգարէս. գարձեալ, զերկուս կտակարանս զհին և զնորս, որ 'ի միաւորութիւն եկեալ 'ի Քրիստոս հաստատեալ՝ բարձին յինքեանս զաստուածութիւն նորա հանդերձ մար-

ձեռամբ. իսկ լծակքն ոսկով պատեալ զսուրբ և զանբիծ հաւատս և զխոստովանութիւն Երրորդութեանն, հանգերձ ամենայն գիտութեամբ պատուիրանաց Աստուծոյ։ Ցուցանեն և այլք զնոր փրկութիւն յայտնեալ 'ի Քրիստոսէ. որպէս սաղմոսն զկոյսն անապական, ուստի ծագեաց Քրիստոս. և քաւութիւնն՝ զխաչն յոր բեւեռեցաւ Քրիստոս. իսկ գաւազանն՝ զընտրութիւն քահանայութեանն 'ի խորհուրդն Քրիստոսի. իսկ քերովբէքն ցուցանեն զքիչու�սաստուածութեանն 'ի մարդիկ և զբնապատաւորութիւն գաստուցն 'ի խորհուրդ եկեղեցւոյ. իսկ երկու տախտակքն զհոգի և զմարմին գրեալ հոգւովն Քրիստոսի 'ի հաւատս և 'ի գործս կենդանի լրմամբ պարգեւացն Աստուծոյ. իսկ բուրվառն ոսկեղէն՝ գարձեալ լցեալ հոգւովն արբով և զօրութեամբ Բարձրելոյն կոյսն Մարիամ։ Իսկ որ հրամայեաց Յեսու քահանայիցն երկու հազար կանգուն 'ի բացեայ տանել

զառապանակն 'ի ժողովրդենէն, այս նշանակէր զԱստուծոյ, որ դեռ եւս տակաւին հեռագոյն էր 'ի մէնջ, տակաւ ինչ մասն ճաճանչաւոր երեւեալ աստուածութեան, այլ ոչ բաւականդակութիւն. մինչեւ գթացեալ ողորմեցաւ և յայտնեցաւ 'ի ձեռն սրբոյ կուսին: Իսկ թիւն ցուցանէր յԱբրահամէ՝ ուր նկարեցաւ օրէնքն թլփատութեանն մինչեւ 'ի գալուստն Քրիստոսի. իսկ զի ոչ թացաւ ոտք քահանայքն 'ի Ջուրն Յորդանանու, զի ոչ էին ծնունդք Ջրոյ՝ այլ սրոյ, որով թլփատեալք էին. գարձեալ և ոչ տապանակն, քանզի անունն Յիսուսի գրեալ կայր 'ի նմա: Իսկ օրինակ և անուն առանց մարմնոյ և արեան ոչ ակրտի. իսկ Ջուրն որ 'ի վերս գարձաւ՝ սքանչելեօք և ոչ ըստ բնութեան, այս զհեթանոսաց նշանակէ, ներքուստ 'ի վերս ելանելով, այսինքն 'ի բարձրագոյն հաւատն: Իսկ կէսն որ 'ի Մեռեալ ծովն անկաւ՝ հոսմամբ, այն զհրէից նշանակէ, որ 'ի ճշմարտութենէ հաւա

տոյ 'ի քաց անեկան և ոչ կացին յուխ-
տին տեառն Աստուծոյ : Իսկ երկու-
տասան քարինքն որ էին 'ի գե-
տոյն, այս զերկոտասան առաքե-
լոցն բերբէ զարինակ. իսկ նոյնչափ
քարինքն որ էին 'ի գետն, այս
զերկոտասան ազգատոհմին նշանա-
կէր, որ գետս եւս տակաւին կան
'ի նոյն հրէական ազգին. իսկ որ
հրամայեաց Աստուած Յեսուայ
յանուանէ քարանց տեղան շինել,
այս զհեթանոսաց զանպտղութիւնն
նշանակէր որ քարացեալք էին : Իսկ
զի սուր ոչ հրամայեաց հպել 'ի
քարինս տեղանոյն, վասն զի ամե-
նեքեան ընդ ապականութեամբ էին
անկեալ. զի երկաթ երկրագործաց
է և պատերազմողաց և արուեստա-
ւորաց, և յԱստուծոյ արարածս 'ի
մարդս. զի դու 'ի քո բնութիւնդ
իմացիս, եթէ 'ի քո բնութիւնդ
ոչ յաւելուլ պիտի և ոչ պակասե-
ցուցանել, և ոչ յօտար գործ ձեռն
մերձեցուցանել՝ որոյ ազգի մարդն.
զի որ արարն զքեզ՝ իւր տաճար ա-
րար, իւր տեղան կանգնեաց և 'ի

քեզ բնակէ անքակուութեամբ։ Իսկ գայլախաղին թլփատուել զժողովուրդն Յեսու 'ի Սատինա. մի զի դիւրագիւտ էր և առաժամայն պատրաստ. և երկրորդ զի քարին խոցուածն արագ ածէ զվէրն քան զեր կաթոյն. և երրորդ զի սուր սպանողութեան գործարան է. և անսուրբ իսկ վիմով թլփատեալն՝ նշանակէր զՔրիստոսի, որ հանդերձեալ էր զմեզ առանց գործարանի թլփատել, այսինքն Հոգւովն սրբով, որ է անձեռագործ թլփատութիւն։ Իսկ ընդՔրը զսուրն քարեղէն ընդ ինքեան թաղեաց Յեսու. քանզի հանդերձեալ էր Քրիստոս իւրով թլփատութեամբն բառնալ զԹլփատութիւն, զորոյ զպատկեր յինքեան օրինակէր Յեսու. վասն այնորիկ թաղէր, զի մի երեւեսցի։ Իսկ Եբրիքով կործանէր 'ի ձեռն տապանակին, ձայնիւ լոկով շուրջ անցանելով զեւթն օր. այսպէս և գժոխք կործանեցաւ 'ի ձեռն աղաղակելոյն Քրիստոսի 'ի վերայ խաչին, եւթն օր շուրջ գալով զքաղաքաւն։

Դարձեալ զկինի այսորիկ յորժամ գնացին Իսրայելացիքն ընդդէմ այլ ազգեաց յաւուրսն Հեզեայ քահանային և եղեւ պատերազմ սաստիկ, և անկան յԻսրայելէ երեսուն հազար գաստաց, և որդիքն Հեզեայ կոստորեցան և տապանակն Աստուծոյ առաւ. արդ առեալ զտապանակն Աստուծոյ տարան յԱզովտոս, ուր էր Դագոն աստուած նոցա. իսկ նա անկեալ կործանէր վաղվաղակի 'ի վերայ երեսաց իւրոց առաջի տապանակին. իսկ քուրմքն գային և կանգնեալ ամրացուցանէին զնա զի մի անկցի. և եկեալ 'ի միւսում աւուր և գտին զԴագոնն 'ի վերայ սեմոցն և հատեալ զգլուխ յուլանն, և երկոքեան թաթմք ոտիցն և երկոքեան դաստակեսոքք ձեռացն ցրուեալք ընդ տուն. և վասն այնորիկ ոչ կոխեն քուրմքք զսեմսն տանն Դագոնայ։ Արդ Դագոն օրինակ է աստանայի. և զոր օրինակ ոք զչար գազան ունի և զժանեղ և ըզմտագլաւոր, զժանիսն քաղէ և զմտագիլն, զի մի զոք ճեռասեացէ 'ի մեր-

ձաւորաց. այսպէս և Քրիստոս ա-
ղար զաստանայ, հատեալ զգլուխն
կոխան եառ արքոցն, և եհատ զձեռս
և զոտս. իսկ ողնայարն որ մնաց՝ այն
է զոր Ցոր ասաց, եթէ Ոգն նորա
ձոյլ երկաթի և սիրտ նորա իբրեւ
զսիրտ գարբնաց, և կողք նորա պը-
ղընծիք և փոր նորա ապամանդեայ
քարինք։ Եւ գարձեալ եհար զնոսա
յերաստանս և 'ի նատոյ ատելիսն, զի
'ի դուրս եկեալ լինէին. և եռա-
ցոյց մուկն յանդս նոցա. և նոքա
տեսեալ զայն և զարհուրեալ փո-
խեցին 'ի Գէթ. և անդ եւս սաստ-
կացաւ հարուածն։ Ապա կոչեցին
զքուրմսն և հարցանէին, և նոքա
ասեն. Այս մահն Աստուծոյ է,
արդ արձակեսցուք զտապանակն
Աստուծոյ, և մի՛ ունայն. և արարին
յօրինակ և 'ի պատկեր ոսկի վասն
գաղանին, և զմկուռնս ոսկիս և քուրց
լի ոսկով, և եդին 'ի նոր սայլի. և
լծեցին անդրանկածին երինջս և
արձակեցին. և հինգ քաղաքք էին,
'ի մի մի քաղաքէ նախարար մի, և
հինգ մկունք ըստ քաղաքացն, նոյն-

Digitized by Google

ոչէս և հինգ երանաւորանք. և բերին
'ի Բիւզանդիոնայ յԱկիրոն, և անտի
'ի Գազա, և անտի յԱսկալոն և 'ի
Պարիսաթարիմ։ Արդ հինգ մեռանքն
որինակ էին հինգ զգայութեանս,
որ ոչնչանալ էին անմաքրութեամբ
իբրեւ զմուկն. այլ 'ի ձեռն Քրիս-
տոսի հաւատոցն յաւազանին մա-
քրութեան արքեցան և եղեն ոգա-
ստուածանք։ Իսկ ստապանակին տա-
նուն յայլազգեաց և կոտորել զիս-
րայէլացիսն, նշանակէր զԱդամայ
անկանելն 'ի փառաց 'ի ձեռն ոգա-
ստուերանապանցութեանն և չարին
խաբէութեամբ լինել ընդ իշխա-
նութեամբ ստատանայի. զի մերկա-
ցուցեալ զփառս 'ի մարդոյն, յան-
խնայ կոտորէր մեզք զամենեսեան։
Իսկ գարձուն ստապանակին յիւր
իշխանութիւնն, այս զԱդամայ ան-
գրէն զգարձ փառաքն 'ի կեանս։

Դարձեալ այլուամ նշանակ էր
առուն ստապանակին. զի ախչէն
Քրիստոսի յԵգիպտոս, զորմէ ասէ
Եսայի. Ընդ ոտսն ձեռապարծքն
Եգիպտոսի յերեսաց նորա. և գարձ-

ձեալ. Եղեցի յաւուր յայնմիկ հինգ քաղաք որ խօսեացին 'ի լեզուս և երդնուցուն յանուն Աստուծոյ։ Նմանապէս և Երեմիայ եւս նշանս և ասէ, թէ Կործանեացին պարիսպքն 'ի ձեռն ծնիցելոյ մանկանն, և սուրքն Աստուած հաւատացի։ Իսկ 'ի մտանելն Քրիստոսի յԵգիպտոս՝ սրբեցաւ մայրաքաղաքն ամպարշտաց, և դարձուցեալ ըստ այնմ, եթէ յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ, զոր ասէ Եսայի. զի Եգիպտոս գժոխոցն օրինակ էր. և որպէս Մովսէս տանջեալ զնոսա հարուածովք, եհան զժողովուրդն յանապատ իբրեւ յերկաթի հնոցէ, և ընկղմեալ զփարաւոն որ է սատանայ. այսպէս և Քրիստոս արարեալ հաւատացեալոց՝ ազատեաց զեկեղեցի համօրէն ամենայն ընուութեամբ մարդկան։ Իսկ տապանակն յորժամ դարձաւ՝ յաւուրս հնձոց էր. և հնձողքն իբրեւ տեսին՝ ցնծացան և զուարճացեալ ընդդէմ ընթացան, առին և ընկալան. զասյլն խորտակեցին և եգին 'ի վերայ վիմի, և զերինջն

Digitized by Google

յոգեկոչեցեալ հանեալ առաջի առաքա-
նակին։ Արդ վէճն օրինակ այսպէս ե-
զանոյս. իսկ վրայոյն՝ խաչին էր տիպ.
երկինքն՝ Քրիստոսի, որ ապաստարա-
գեցաւ 'ի վերայ խաչին։ Դարձեալ
օրինակ էին քահանայից. զի որպէս
նոքա ծնանին եզինս որ գործեն
զերկիր, այսպէս քահանայք զբանս
Աստուծոյ, որ երկրագործէ զբա-
նաւոր երկիրս։ Դարձեալ՝ երկուց
կատակարանաց, որ զՔրիստոս բար-
ձեալ ունին յինքեանս. և որպէս
հնձողքն տեսին զառապանակն և ու-
րախացան յոյժ, այսպէս և Քրիս-
տոսի առաքեալքն յորժամ տեսին
զՔրիստոս յարուցեալ 'ի մեռելոց
և եւ նոցա ոգիոյն, և նոքա խնդա-
ցին և ուրախացան, և ոչ միայն նո-
քա, այլ և բոլոր տիեզերքդ։ Իսկ
յորժամ էր Երեմիայ յԵրուսաղէմ
և խուրձն որ մնացեալ էին 'ի գերու-
թենէ կամէին սպանանել զնա յԵ-
գիպտոս, ոչ նորա կամաւք, այլ ա-
կամայ 'ի բառնուլթենէ. իսկ նորա
խմացեալ հոգւոյն սրբոյ, առ ըզ-
առապանակն և տարաւ յայր ուրեմն՝

ուր տուան օրէնքն. և իբրեւ եմուտ
'ի ներքս 'ի յայրն տապանակաւն
հանգերձ, աղօթեաց և խնդրեաց
յԱստուծոյ բանալ վիմին և ծածկել 'ի նմա տապանակին. իսկ իբրեւ ծածկեցաւ՝ կնքեաց զտեղին և գրեաց զանուն Աստուծոյ, և իբրու երկաթի գրչաւ գծագրեցաւ գիրն 'ի նմա. ապա ինքն եկեալ 'ի դուրս յայրէ անտի և յԵգիպտոս գնաց։

Այլ որ ամենեցուն Աստուածն է և տէրն տերանց, Հայրն փառաց, և Որդին միածին և սուրբ Հոգին Ճշմարիտ, որ ստեղծ է զիւրն ինքն պատուել, զի լոյս հանապազ յամենայն գիշեր երեւի 'ի վերայ. բայց յայտնի և յառնէ 'ի նեռին ժամանակս, և դնի յայնմ տեղւոջ ուր օրէնքն տուան. և սուրբք ամենայն առ նա ժողովին, և պահէ զնոսա. և ո՞վ է որ բառնայ զնա, եթէ ոչ Մովսէս օրէնադիրն, և լինի՝ զի յանգիմանիչ հրէական ազգին, որք ոչ հաւատացին գրոյն և օրինացն։ Բայց յայնժամ բազումք հաւատան յաստուած և մարտիրոս-

Digitized by Google

ատանան 'ի ձեռանէն չարչարչար մահ-
հուամբ, հարիւր և քառասուն և
չորս հազար, 'ի Քրիստոս Յիսուս
'ի տէր մեր. որոմամ փառաք յաւի-
տեանս. ամէն։

Digitized by Google

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 • Ցօր • այն է ։
2 • Ցօրին • պակասէր բայն ։
3 • Ցօր • յերկիրս ։
4 • Ցօր • այն գիր ։
5 • Ցօր • պէսիլն ։
6 • Ցօրին • կրճատեալ էր բառն ։
7 • Ցօր • համանգամ ։
8 • Այսպէս յօրինակին ։
9 • Ցօր • եղբայր ։

Digitized by Google

Digitized by Google

ՑԱՆԿ

ԺԸ. ՀԱՏՈՐՈՑ

Եղիշէի քահանայի Հառ ՅԱյ-
լակերպութիւն Տեառն . . . 5
Մովսէսի Խորենացւոյ Հառ 'ի
մեծի աւուր Տապանակին . . 71

Digitized by Google

Digitized by Google